Azg
armenian daily

19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 ՈՒՐԲԱԹ 190 (2394)

«Այսօր հրադադարի խախտումը վտանգավոր է Ադրբեջանի համար»

ԲԱՔՈՒ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի նախագահի նախկին խորհրդական Վաֆա Գուլուզադեն, ըստ «Ենի Մուսավաթ» թերթի, մեկնաբանելով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի օգնական Ս. Յասսրժեմբսկու հայտարարությունն այն մասին, թե Աֆղանստանից Չեչնիա ներթափանցող ահաբեկիչներն անցնում են Ադրբեջանի եւ Վրաստանի տարածով, կանխատեսում է հայկական ուժերի միջոցով Ադրբեջանի նկատմամբ ռուսական պատժամիջոցների կիրառում: «Այսօր հրադադարի խախտումը վտանգավոր է Ադրբեջանի համար: Հայաստանը վերտին կարող է հարձակվել Ադրբեջանի վրա՝ Ռուսաստանի հնարավոր հրահրման արդյունքում: Այս տեսանկյունից մեր երկրի զինված ուժերը պետք է պատրաստ լինեն ամեն տեսակի սպառնալիքի», հայտարարել է Գուլուզադեն: Նա նաեւ կոչ է արել հրադադարը չդիտել իբրեւ որոշակի ձեռքբերում: «Ժամանակին հրադադարը ձեռքբերում էր, բայց եթե մեր հողերը մնան օկուպացիայի տակ, մենք սա չենք կարող որակել իբրեւ ձեռքբերում», ասել է նախկին խորհրդականը:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցչի կարծիքով 907 հոդվածի վերանայումն անխուսափելի է

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 907 հոդվածի վերանայումը մոտ ապագայում անխուսափելի է: Այս մասին հայտնեց Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրենի պատասխանատու Արմի Վարդանյանը: Ըստ տիկին Վարդանյանի, ԱՄՆ-ը ներկայումս պատերազմական վիճակում է, եւ նրա կառավարությունը համարում է, որ 907 հոդվածը խանգարում է ահաբեկչության դեմ պայքարին: «Նման պայմաններում Կոնգրեսը չի կարող չպատասխանել նախագահին»:

«Ազատության պատասխանության ակտ» կոչվող օրենքի 907 հոդվածը արգելում է ԱՄՆ կառավարությանը՝ օգնություն հատկացնել Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ վերջինս չի վերացրել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը: Ըստ Արմի Վարդանյանի, կառավարությունը՝ գտնում է, որ այդ հոդվածը մասնավորապես խանգարում է, որ ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոն համագործակցի Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետ բեն Լադենի հետ հնարավոր կապ ունեցող անձանց հայտնաբերելու համար:

Արմի Վարդանյանը տեղեկացրեց, որ ԱՀՀ-ն այնուհանդերձ պետք է պայքարի, որպեսզի ակնկալվող փոփոխությունը հնարավորին չափ ֆիլ վնասի Հայաստանի շահերին: Սպասվում է, որ 907 հոդվածը ոչ թե պարզապես կվերացվի, այլ նախագահին իրավունք կտրվի այն «շրջանցել», ելնելով ազգային անվտանգության շահերից (ինչպես առաջարկում է, մասնավորապես, սենատոր Սեմ Բրաունբեկը): ԱՀՀ-ն պետք է ձգտի բացառել «անվերապահ շրջանցման» (blanket wavier) սկզբունքը, այլ պահանջի, որպեսզի օրենքի շրջանցումը նախագահի կողմից սահմանափակվի որոշակի պայմաններով:

Միաժամանակ, ըստ Արմի Վարդանյանի, ԱՄՆ-ում գիտակցում են, որ Հայաստանը նույնպես պայքարում է ահաբեկչության դեմ եւ ունի օգնության կարիք: Այնպես որ, նրա կարծիքով, Կոնգրեսը հաշվի կառնի նաեւ Հայաստանի կարիքները: Տիկին Վարդանյանը դժվարացավ ճշտել, թե ինչ փոփոխություններ կարող են կատարվել ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրվող օգնության տեսակետից:

Թե երբ կարող է կատարվել 907 հոդվածի փոփոխությունը, ըստ Արմի Վարդանյանի, դժվար է կանխատեսել: Դրան կարող են խոչընդոտել ինչպես ընթացակարգային խնդիրներ, այնպես էլ զուտ տեխնիկական, ինչպես օրինակ սիբիրախտի տարածումը կանխելու նպատակով Կոնգրեսի շենքում անցկացվող միջոցառումները:

«Ազգի» կողմից ավելացնենք, որ Մ. Նահանգներում Հայ դատի համար պայքարող բոլոր կազմակերպությունները չեն, որ նման հետաքրքրությամբ պատրաստ են զենքերը վայր դնել 907 հոդված-ուղղումի հարցում: Մասնավորապես ՀՅԴ Վաշինգտոնի Հայ դատի հանձնախումբը, ըստ մեզ հասած տեղեկությունների, այս օրերին պատրաստվում է նույն հարցի կապակցությամբ անձնապես դիմել նախագահ Ջորջ Բուշին: Հարցին առավել հանգամանալից կանդրադառնանք մեր վաղվա համարում:

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Տերյուրանները խաղաթղթի միջոց չեն

Բայց կարող են ապառել թուրք-ադրբեջանական խաղաթղթերը

ՏԱԿՈԲ ՉԱԲԲՈՅԱՆ

Աֆղանստանում թալիբների դեմ պատերազմ սանձազերծելիս պաշտոնական Վաշինգտոնը հարկ համարեց հայտարարել դրա հակահաբեկչական բնույթի մասին: Պատերազմին նախորդել էր ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հակահաբեկչության սկզբունքներին տրամագծորեն հակադիր հայտարարությունն ի լուր աշխարհի. «Կամ մեզ հետ եք, կամ՝ ահաբեկիչների»: Վերոհիշյալ երկու հայտարարությունների համադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ ԱՄՆ-ն իր պարտքն է համարում ահաբեկել միջազգային հանրությանը, որպեսզի հնարավորինս մեծ թվով երկրների ներքաշի աֆղանական պատերազմի մեջ: Նման մոտեցմամբ միջազգային հանրության ահաբեկումը դառնում է հակաահաբեկչական պատերազմի միջոց:

Թե այս մոտեցումն ինչի՞ կհանգեցնի՝ ցույց կտա ժամանակը: Բայց որ միջազգային հանրությանն ուղղված նախագահ Բուշի վերոհիշյալ հայտարարությունը միանգամայն հանգեցրել է միջազգային ասպարեզում «ահաբեկչության» խաղաթղթի անզուսպ շահարկումների, ակնհայտ է: Հատկանշական է, որ շահարկողներն էլ «Բուշի հետ լինելը» դարձնում են շահարկումների արդյունավետության միջոց: Այսպիսով ադրբեջանցիները սկսում են վայնասուն բարձրացնել, թե Հայաստանը Ադրբեջանի համար թիվ 1 ահաբեկչական պետությունն է: Այդ ընթացքում ղարաբաղյան պատերազմին թալիբներից մեծ թվով վարձկանների մասնակից դարձնելու բազմաթիվ փաստերի հետ մոռացության են տրվում այնպիսի փաստեր, ինչպիսիք են «Ալ Ղաիդա» կազմակերպության վերջերս բացահայտված ներկայությունն ու նրա ներկայացուցիչների երկարամյա գործունեությունն Ադրբեջանի տարածքում կամ ադրբեջանցի վահաբականների հենակետերը Չեչնիայում, ինչպես նաեւ բազմաթիվ ադրբեջանցիների անդամակցությունը վրաց-չեչենական զինված խմբավորումներին:

Տես էջ 5

Իսրայելը վերջնագիր է ներկայացրել Պաղեստինին

Երուսաղեմում Պաղեստինի ժողովրդական ճակատի կողմից Իսրայելի տուրիզմի նախարարի սպանությունն արմատապես փոխեց իրադրությունը տարածաշրջանում այն պահին, երբ թվում էր, թե մոտ է իրավիճակի կայունացումը բանակցությունների ճանապարհով: «Ոչ մի դեմոկրատական երկիր չի հանդուրժի իր ընտրյալի սպանությունը», ասվել է Իսրայելի կառավարության նիստում:

Կառավարությունը որոշում է կայացրել, ըստ որի Պաղեստինից պահանջվում է 7 օրվա ընթացքում Իսրայելին հանձնել Զեեւիին սպանողներին եւ ժողովրդական ճակատի ղեկավարներին, այլապես Պաղեստինի ղեկավարները կդիտվեն որպես ահաբեկչության աջակցողներ, եւ նրանց դեմ կկիրառվեն համապատասխան պատժամիջոցներ:

Պաղեստինի ղեկավարության անդամ Զիադ Աբու Զիադը ելույթ է ունեցել Իսրայելի հեռուստատեսությամբ եւ հայտարարել, որ իրենք չեն հանձնի մարդասպաններին, եւ եթե նրանք կգտնվեն Պաղեստինի տարածքում, ապա կձերբակալվեն եւ կդատվեն Արաֆաթի կողմից: Նա ավելացրել է, որ սպանության կազմակերպիչները դեմ են հրադադարին, իսկ իրենց նպատակն է շարունակել բանակցությունները մինչեւ լիակատար հրադադար:

Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի ղեկավար Ահմադ Սադաթը, որը ճակատի ղեկավար է ընտրվել Իսրայելի կողմից նախկին ղեկավար Ալի Մուստաֆայի սպանությունից հետո, երդվել էր վրեժխնդիր լինել նրա արյան համար եւ հայտարարել է, որ սա ընդամենը առաջին քայլն է: Նրան հաջողվել է բարձրացնել իր կազմակերպության դերը եւ իր շուրջը համախմբել հազարավոր երիտասարդների:

Իսրայելի նախարարները պահանջել են վարչապետից եւ արտգործնախարարից դիմել ծայրահեղ քայլերի ընդդեմ Պաղեստինի: Երեկ առավոտյան «Ցահալի» զորքերը նորից մտել են Պաղեստինի տարածքները եւ կանգ առել Ջենին եւ Ռամալլա քաղաքներում: Ենթադրվում է, որ ռազմական գործողությունները կարող են ընդլայնվել երեկ արդեն սկսված փոխհրաձգություններից հետո:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Երկարատեւ պատերազմ տարբեր թատերաբեմերում

Նախազգուշացնում է Ջորջ Բուշը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Քանի դեռ ինչ-որ մեկը փորձում է ահաբեկել օրինական կառավարություններին, հարկավոր է շարունակել պատերազմը ահաբեկչության դեմ: Համաձայն «Վաշինգտոն փոստ» թերթի հաղորդման, այս հայտարարությամբ հանդես է եկել Շանհայում APEC-ի երկրների տնտեսական համաժողովին մասնակցող ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը ասիական զանգվածային լրատվամիջոցների խմբագիրներին տված հարցազրույցի ժամանակ: ԱՄՆ նախագահն ընդգծել է, որ այս պատերազմը «մղվելու է տարբեր թատերաբեմերում», եւ կարող է տեւել երկու տարուց ավելի: Ջորջ Բուշը հայտարարել է, որ գիտակցում է ընդունված կոշտ որոշումների քաղաքական հետեւանքները:

Իր հերթին «Նյու Յորք թայմսը» հաղորդում է, որ Պենտագոնը ոչ միայն ընդլայնում է նպատակակետերի ցանկն Աֆղանստանում, այլեւ թույլատրում է իր օդաչուներին սեփական հայեցողությամբ հարվածել նպատակակետերի: Ինչպես հաղորդում է New York Times-ը, դեռեւս վիետնամական պատերազմի ժամանակներից ԱՄՆ ռազմական դոկտրինան քարոզում է շարունակական գործողություններ՝ հուսալով կոտրել դիմադրելու հակառակորդի կամքը: Թերթի տվյալներով, այն բանի նշանը, որ թալիբները սկսում են հոգնել պատերազմից, թալիբների արտաքին գործերի նախարարի գաղտնի բանակցությունների ձեռնարկումն է Պակիստանում՝ հուսալով Վաշինգտոնին ներքաշել օդային ռմբակոծությունները դադարեցնելու վերաբերյալ բանակցությունների մեջ:

Հայաստանում ԱՄՆ-ի նշանակյալ դեսպանը ներկայացավ Կոնգրեսի լսումներին

Նախագահ Բուշի կողմից Հայաստանում Մ. Նահանգների դեսպան նշանակված Ջոն Մ. Օրդուեյը երեկ ներկայացավ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի լսումներին, հաղորդում է Ամերիկայի հայկական համագումարի Վաշինգտոնի գրասենյակը: Օրդուեյը, որ նախապես Մոսկվայում Մ. Նահանգների դեսպանատանը զբաղեցնում էր ամերիկյան առաքելության պետի տեղակալի պաշտոնը, փոխարինելու է Հայաստանում Մ. Նահանգների դեսպան Մայքլ Լեմոնին, որն ավարտել է իր պաշտոնավարության շրջանը: Լսումներին, որը նախագահում էր սենատոր Ռոբերտ Տորիչելին, Օրդուեյը ողջունեց Կոնգրեսի շահագրգիռ մոտեցումը Հայաստանի եւ Կովկասի նկատմամբ եւ ընդգծեց, որ Մ. Նահանգները գերազանց հարաբերություններ ունի Հայաստանի հետ: Սենատոր Տորիչելին խոստացավ իր գործընկերների հետ արագացնել դեսպանի նշանակման գործընթացը:

Քենիայի եւ Տանզանիայի ահաբեկչությունների ղեկավարներից 3-ը դատապարտվեցին ցմահ բանտարկության

Մանհեթենի (Նյու Յորք) շրջանային դատարանը երեկ ցկյանս բանտարկության դատապարտեց 1998 թ. Նայրոբիի (Քենիա) եւ Դար էս Սալամի (Տանզանիա) ամերիկյան դեսպանատների համաժամանակյա պայթեցման մեղավորներին, որոնց հետեւանքով զոհվել էր 224 մարդ եւ վիրավորել 4500 հոգի: Ուսամա բեն Լադենի առաքյալներից համարվող այդ հանցագործներից առաջինը Խալֆան Խամիս Մոհամադն է, 28 տարեկան, որ մյուս ահաբեկչի՝ Մոհամադ Ռաշիդ ալ Օուհալիի (24 տարեկան) հետ ցկյանս բանտարկության դատապարտվեց՝ առանց դատավճիռը բողոքարկելու իրավունքի: Երրորդը՝ 36 տարեկան հորդանանցի Մոհամադ Սադիք Օդեհն է, որը նույն պատիժն է կրելու Տանզանիայի ամերիկյան դեսպանատան պայթեցումն իրականացնելու համար: Վերջինս ատենակալներին երախտագիտություն հայտնեց մահվան չդատապարտելու համար: Իրականում, վերոհիշյալ երեքն էլ ենթակա էին մահապատժի, սակայն ատենակալները նրանց ցմահ բանտարկություն վճռեցին:

տեղական

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՈԱԿ շարքերը համալրում են երիտասարդները

Երեկ Թեթեյան կենտրոնում հավաքվել էին երեւանցիներ, աբովյանցիներ, մեծամորցիներ, մարդիկ, ում համախմբում է ընդհանուր գաղափարը եւ ավանդական կուսակցությանն անդամակցելու ցանկությունը: Ներկաներին ողջունեցին ՀՈԱԿ փոխատենաթեռ Հարություն Առաքելյանը, Հանրապետական վարչության անդամ Մեսրոպ Հարությունյանը:

Ընկեր Առաքելյանը ողջույնի խոսքով դիմեց ներկաներին, անդրադարձավ 115-ամյա կուսակցության հարուստ պատմությանը, խոսեց նաեւ կուսակցության այսօրվա գործունեության մասին: ՀՈԱԿ փոխատենաթեռը մասնավորապես նշեց, թե բոլոր ժամանակներում էլ կուսակցությունը համախմբել է ազատականության գաղափարի համակիրներին, իր ողջ պատմության ընթացքում ազգանպաստ գործունեություն է ծավալել եւ հայրենիքում, եւ սփյուռքում, հիմա էլ ուժով լեցուն է գործելու երկրի բարգավաճման համար, ինչը, կուսակցության համոզմամբ, ազատական տնտեսության ստեղծման ճանապարհով կարելի է իրականացնել:

«Իհարկե, առկա խնդիրներն ընդհանուր են ամբողջ հանրապետության համար, սակայն յուրաքանչյուր բնակավայր ունի նաեւ իրեն բնորոշ դժվարությունները: Կուսակցությունն իր կարողության չափով պատրաստ է բարձրացնել դրանք եւ փորձել գտնել լուծման ճանապարհները»:

Նույն օրը տեղի ունեցավ նաեւ երդմնառության արարողությունը, իսկ կուսակցության շարքերը վերջերս համալրածները ստացան անդամատոմսեր: Հատկանշական էր, որ գրեթե բոլոր նորագիրները երիտասարդներ էին: Ոամկավար Ազատական կուսակցության դրոշի առջեւ հայ ավանդական կուսակցություններից հնագույնին անդամակցել երդվեցին մեծամորցիներ Գարիկ Դավթյանը, Արթուր Հարությունյանը, Կարեն Պետրոսյանը, Գագիկ Եղիազյանը, Մարգարիտ Նավասարդյանը, Սամվել Կարապետյանը, Վիտալի Բաղիրյանը, երեւանցիներ Էլեն Ստեփանյանը, Հրայր Գեւորգյանը, Արթուր Համբարձումյանը, Տիգրան Հարությունյանը, Լեւոն Սարգսյանը:

Նորագիրները կհամալրեն «Այգեստան», «Էրեբունի», «Կենտրոն», «Զարթոնք» եւ այլ ակումբները:

Մ. Հ.

Պարգեւներ Թարգմանչաց տոնի կապակցությամբ

Մեկ շաբաթ առաջ սկիզբ առած Թարգմանչաց տոնը Օշականից տարածվեց Դսեղ՝ թումանյանական ընթերցումներով, Ծաղկաձորում՝ «Քրիստոնեությունը հայ գրականության մեջ» գիտաժողովով եւ ամփոփվեց երկօրյա գիտաժողովով ՀԱ ակադեմիայում, որը կրում էր «Թարգմանությունը մշակույթների երկխոսության բանալի» խորագիր. գիտաժողովի ընթացքում ընթերցվեցին շուրջ 36 զեկուցումներ նվիրված Հայաստանի արվեստին (ճարտարապետության պատմություն ու տեսություն նաեւ արվեստ): Երեկ եզրափակվեց Թարգմանչաց շաբաթը, եւ շատերին անակնկալ էր Հ�հ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիվ 956 հրամանագրով Մովսես Խորենացու մեդալով պարգեւատրվեցին Ալեքսանդր Բոժկոն՝ Ուկրաինայի դեսպանը Հայաստանում, Վահե Գոդելը՝ Շվեյցարիա, Ժան Պիեռ Մահեն՝ Ֆրանսիա, Սիմեդ Նուրի Զադեն՝ Իրան, Կարապետ Սուրենյանը, Կիմ Բակչին, Մարգարիտ Դարբինյանը՝ «Հայ գրականությունը թարգմանաբար միջազգային հանրությանը ներկայացնելու, հայ թարգմանական գրականությունը հարստացնելու գործում ներդրած նշանակալի ավանդի համար» եւ Թարգմանչաց տոնի կապակցությամբ:

Իսկ 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման պետական հանձնաժողովի նախագահի տեղակալ Խորհրդ Հարությունյանը եզրափակիչ ելույթում հատկապես նշեց բոլոր նրանց անունները, ովքեր դարձել են մեր մշակույթի դեսպանները տարբեր երկրներում ու հարստացրել մշակութային կյանքը թարգմանությամբ: Թարգմանությունը որպես մշակույթ եւ որպես մշակույթների երկխոսության հիմնական բանալի, 21-րդ դարի շեմին, այսօր առավել քան հրատապ է, եւ այդ գործում ցուցաբերած գործունեության համար ՀՀ նախագահի հրամանագրով պատվոգրեր ու հուշամեդալներ շնորհվեցին Փառանձեմ Մեթիխանյանին (լեզվաբան) եւ Պիտեր Քաուին (հայագետ, ԱՄՆ), որոնք մեծ դեր ունեն մեր մշակույթի տարածման ու զարգացման, նաեւ մշակութային կապեր ստեղծելու գործում: Բացի պետական պարգեւներից 16 արվեստաբան, լեզվաբան, թարգմանիչ, հայագետ, մշակութային գործիչ, գրականագետ եւ բանաստեղծ-թարգմանիչներ արժանացան Հիսուսոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների կազմակերպման հանձնաժողովի պատվոգրով ու հոբելյանական մեդալով:

Թարգմանչաց շաբաթն իր ավարտը կգտնի այսօր Թարգմանության կենտրոնի բացումով, որը նախաձեռնել է «Անգլերեն լեզվով խոսողների միությունը» Մատենադարանի 39/12 հասցեում եւ Վահե Գոդելի «Այստեղ-այնտեղ» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՍՅԱՆ

Հայաստանը դեռ չի ճշտել իր դիրքն աշխարհում

Որոշվեցին ազգային անվտանգության կոնցեպցիա

Աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների շրջադարձային յուրաքանչյուր պետության համար առաջնահերթ է դառնում վերամշակել կամ պարզապես հստակեցնել իր ազգային անվտանգության խնդիրները եւ առավել նպաստավոր ուղիներ գտնել դրանց լուծման համար: Խնդիրն առաջին հերթին վերաբերում է Հայաստանի նման փոքր եւ աշխարհագրական բարդ հանգույցում գտնվող երկրին, որը մինչեւ հիմա ազգային անվտանգություն հասկացությունը չի հստակեցրել եւ հստակ կոնցեպցիա չի մշակել: Եվ եթե ազգային անվտանգության խնդիրը չէր կարեւորվում մինչեւ սեպտեմբերի 11-ը, ապա հիմա պարզապես օրախնդիր է դառնում նման կոնցեպցիայի կամ գոնե հիմնադրույթների մշակումը:

Առաջին քայլն այս ուղղությամբ կատարեց Ազգային ժողովը, որն արդեն իսկ շրջանառության է դրել «Ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» մի օրինագիծ: Հեղինակների նպատակը ոչ այնքան նախագիծը նույն տեսքով ընդունելն է, որքան քաղաքական ու հասարակական շրջանակներին համախմբելը եւ առաջադրված հարցի շուրջ լուրջ առաջարկների ընդունումը:

«Վարկած» վերլուծական կենտրոնի եւ ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի նախաձեռնությամբ հրավիրված քննարկումները դրա առաջին քայլերն էին, որոնց մասնակցում էին քաղաքական ուժեր, օրենքի նախագծի համահեղինակ Վարդան Բոստանջյանը, գեներալ-մայոր Էդուարդ Սիմոնյանը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Թեեւ նշվեց, որ օրինագիծը բավական լուրջ աշխատանքների արդյունք է, սակայն չի տալիս բոլոր հարցերի պատասխանները:

Եվ իսկապես, օրենքի նախագծի ամենալուրջ թերությունն այն է, որ ազգային անվտանգության հայեցակարգ, ըստ էության, առաջ չի քաշվում եւ սահմանափակվում է միայն հիմնադրույթների մշակմամբ: Լուրջ խնդիր է առաջանում՝ ունենալ հստակ, սեղմ, ազգային անվտանգության ուղղությունների, առաջնահերթությունների, նպատակների մասին փաստաթո՞ւղթ, թե՞ մեկ օրենքով ամփոփել այդ հսկա ոլորտը:

ՌԴ-ն, օրինակ, այս հարցը շատ հստակ է լուծել: 1997 թ. դեկտեմբերի 17-ին Ռուսաստանի նախագահ Ելցինը հրաման ստորագրեց ՌԴ ազգային անվտանգության կոնցեպցիայի մասին, որն ավելի կոնկրետացավ 2000 թ. հունվարի 10-ի Պուտինի հրամանագրով: Այդ փաստաթուղթն ամփոփում է եւ ՌԴ դիրքն ու կողմնորոշումներն աշխարհում, եւ ազգային հետաքրքրությունների շրջանակները, եւ ազգային անվտանգության ապահովման հիմնադրույթները: Սակայն հայկական իրականության մեջ ազգային անվտանգություն հասկացությունը տարբեր կերպ է ընկալվում: Ըստ մի կողմնորոշման, դրա հիմնադրույթները պիտի՝ հիմնվեն ազգային գաղափարախոսության, ազգային արժեքների վրա, մյուս կողմից՝ առաջնահերթ են համարվում գլոբալ անվտանգության խնդիրը, մեր ազգային շահերը, հետաքրքրությունները հարմարեցնելու խնդիրը, որպեսզի կարողանանք կողմնորոշվել աշխարհում ընթացող գլոբալիզացիոն գործընթացներում: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ կոնցեպցիայի հիմքում պետք է ժողովրդավարական արժեքները դրվեն, որոնք, ի դեմ, շատ դեպքերում ուղղակի հակասում են ազգային գաղափարներին:



Սակայն բոլոր դեպքերում ազգային անվտանգության խնդիրները դիտարկելիս անհրաժեշտ է դառնում ազգային գաղափարախոսության կատեգորիայի մշակումը: Սա հենց այն անկյունաքարն է, որի շուրջ պետք է հավաքվեն պետությունը, քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները, քաղաքական բոլոր ուժերը: Ազգային գաղափարախոսությունն այսպիսով դառնում է մի հանգրվան, որտեղ պետության եւ կուսակցությունների շահերը ստորադասվում են ազգի հարատեւման ու բարգավաճման հիմնախնդիրներին: Այս համատեքստում առաջ է գալիս մեկ կարեւոր հարց՝ ո՞րն է առաջնահերթ, պետության՞ անվտանգությունը, թե՞ ազգայինը: Հայոց պատմության էջերը փաստում են, որ պետությունը շատ դեպքերում զոհաբերվել է՝ ազգայինը փրկելու համար: Այսինքն՝ անկախ պետության անգնահատելի դերից ազգապահպանության մեջ, ազգային անվտանգությունը դառնում է առաջնահերթ: Իսկ պետությունն իր բոլոր կառույցներով նպաստում է անվտանգության ապահովմանը, որտեղ ոչ մի քաղաքացի, կազմակերպություն չի կարող անտեսվել: Սակայն, ինչպե՞ս եւ ո՞ւմ պատասխանատվությամբ է պետությունը դա իրականացնում: Այս հարցերի պատասխանը օրինագիծը չի տալիս: Դեռեւս հստակ չէ, թե ի՞նչ համակարգ պետք է ստեղծվի ազգային անվտանգության ապահովման նպատակով, եւ ո՞վ է մշակում դրա առաջնահերթ խնդիրները:

Ո՞վ է սահմանելու մեր հավանական դաշնակիցների եւ հակառակորդների միջեւ սահմանը եւ ի՞նչ սկզբունքներով: Այս խնդիրը ռուսական իրականության մեջ հստակ է դրված: Նախագահը ներկայացրել է կոնցեպցիա, ինքն է երաշխավորում իրագործումը եւ բնականաբար ինքն է պատասխանատու: ՌԴ-ում այս առումով ազգային անվտանգության խորհուրդը դրանք իրականացնող մարմնի ֆունկցիաներ է կատարում: Կենսակա՞ն է այս մոդելի իրագործումը Հայաստանում՝ լուրջ քննարկման թեմա է, որը կարելի է իրականացնել հասարակական եւ Աժ մակարդակներով քննարկումների ընթացքում: Որ այս հարցում շահագրգիռ են բոլորը, հաստատվեց նաեւ ծավալված քննարկումների ընթացքում, որտեղ շոշափվեցին հենց վերոշարադրյալ խնդիրները:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գրիշա Դավթյանը դեռեւս ձերբակալված չէ

ՏԱՎՈՒՇ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 15-ին Բագրատաշենի մախսակետում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ Տավուշի մարզային դատախազությունը իրական գործ է հարուցել ՀՀ Քրեական օրենսգրքի 15-99 հոդվածով՝ սպանության փորձ: Տավուշի մարզի դատախազի տեղակալ Աշոտ Գեւորգյանից «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակիցը տեղեկացավ, որ Գրիշա Դավթյանը դեռեւս ձերբակալված չէ, նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

Ինչպես հայտնել ենք, Բագրատաշենի մախսակետում վեճ է եղել մախսակետի նախկին պետ Գրիշա Դավթյանի եւ մախսակետի պետի պաշտոնակատար Կարեն Ջանոյանի միջեւ, որը վերաճել է ընդհարման: Դավթյանը հանել է ատրճանակը՝ փորձելով կրակել Ջանոյանի ուղղությամբ: Քաշքշուկի ժամանակ արձակվել է 7 փամփուշտ, ուսի շրջանում հրազենային թեթեւ վնասվածք է ստացել Դավթյանի ընկերը: Այնուհետեւ Դավթյանը դիմել է փախուստի՝ զենքի սպառնալիքի տակ պատանդ վերցնելով մախսակետի շենքի մոտ կանգնած ավտոմեքենաներից մեկի վարորդին:

Ավելացնենք, որ Գրիշա Դավթյանը ակտիվորեն մասնակցել է արցախյան ազատամարտին:

Նոյեմբերյանի տարածաշրջանը արդեն 6 օր զրկված է ռադիոյից

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 12-ի կեսօրից մինչ օրս Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանը զրկված է ռադիոյից: Նոյեմբերյանի տարածաշրջանում գործում է միայն լարային ռադիոկապ: «Արմենտել» ՓԲԸ Նոյեմբերյանի հեռախոսային հանգույցի պետ Ռազմիկ Եսայանը հայտնեց, որ Երեւանից հաղորդումներ չեն ստանում, որի պատճառն իրեն հայտնի չէ:

Ուղղում: «Ազգի» 18.10.2001 թ. համարում «Տնտեսության զարգացման միտումներ Շիրակի մարզում» հրապարակման մեջ 150 մլն դրամի եւ 250 մլն դրամի փոխարեն տպագրվել է 150 դոլար եւ 250 մլն դոլար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ՊԱՏԱՍԽԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Հարկերի թերահավաքմանը նպաստել են նաեւ գերավճարները

Առաջին անգամ իր նախորդին ֆինանսական փորձ արեց պետեկամուտների նախարար Երվանդ Զախարյանը

Ինչպես հայտնի է, երրորդ եռամսյակում բյուջեի եկամտային մասը թերակատարվել է մոտ 7 մլրդ դրամով: Ինչպես ենթադրվում էր, երեկ ՀՀ կառավարությունում ֆինանսական առարկա դարձավ այդ խնդիրը: Մասնավորապես ֆինանսվեց հարկային պարտավորությունների կատարման կանոնակարգման հարցը: Վարչապետի հանձնարարականով 10-օրյա ժամկետում նախարարությունները, գերատեսչությունները ու մարզպետարանները պետական բաժնեմասով ձեռնարկությունների ու կազմակերպությունների ցուցակը պետք է ներկայացնեն պետական եկամուտների նախարարություն (ՊԵՆ) հարկային պարտավորությունների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշենք, որ առաջին եւ երկրորդ եռամսյակների հարկային-մաքսային մուտքերի գերակատարումներից հետո ՊԵՆ-ից մաքսային վարչության անջատման արդյունքում առաջին անգամ է գրանցվել հարկերի էական թերահավաքում (մաքսային մուտքերը դեռ մի բան էլ գերակատարվել են-Գ. Մ.): Նախարարը երեկ փորձել է բացատրություններ տալ: Ըստ Ե. Զախարյանի, հարկային պարտքերի առյուծի բաժինը հասնում է էներգետիկ համակարգին: Միեւնույն ժամանակ, սակայն, նա մատնանշում է օրենսդրական ակտերի անկատարությունն ու հարկային ցածր վարչարարությունը: Ներկայումս նախապատրաստվում է ու շուտով կառավարության դատին կներկայացվի մի «մեծ միջոցառումների ծրագիր» օրենսդրական ակտերի փոփոխության ու վարչարարության բարելավման վերաբերյալ:

Երեկ պետեկամուտների նախարարը մասամբ հաստատեց նաեւ մասնավոր հատվածում արդեն երկար ժամանակ շրջանառվող այն տեսակետը, թե հարկերի հավաքումը երրորդ եռամսյակում դժվարացել է, քանի որ նախորդ նախարար Ա. Մանուկյանի կոչս քաղաքականության հետեւանքով գերավճարներն ու կանխավճարներն ուղղակի քամել են հարկատուներին: Կանխավճարների մասով ոչինչ չասվեց, ինչ վերաբերում է գերավճարներին, ապա, «Թերակատարման համար որոշակի ազդեցություն ունեցան գերավճարները, որոնք առաջանում են ներմուծող ապրանքների եւ պատրաստի արտադրանքի արտահանման հետ կապված որոշ լրացուցիչ պարտավորություններ առաջացնելով հարկային մուտքերից այդ գերավճարների հետվերադարձի հարցում», պարզաբանեց պրն Զախարյանը:

Նա նաեւ հավաստիացրեց, որ ե-

Հայաստան մտնող գազի ծավալը 20 տոկոսով կրճատվել է

երեկ առավոտյան Հայաստան մտնող գազի ծավալները կրճատվեցին մոտ 20 տոկոսով: Դա թերեւս անսպասելի չէր, քանի որ մի քանի օր առաջ «Իտեռա» կորպորացիան հայտարարել էր գազի ծավալների դադարեցման մասին, ապա՝ հերքել: Երեկ Հայաստանի գազամատակարարն, այնուամենայնիվ, իր խոսքումը կատարեց:

Նշենք, որ օրական Հայաստան է մուտք գործում 5,3 մլն խմ գազ, վերոհիշյալ ծավալի կրճատումները, «Հայռուսգազարդից» ստացված պատշաճական մեկնաբանության համաձայն, էականորեն չեն ազդի գազ սպառողների գործունեության վրա: Գազի դիմաց հայկական կողմի ընթացիկ պարտքը սեպտեմբեր ամսվա համար կազմում է 2,8 մլն դոլար, իսկ հոկտեմբեր ամսվա ընթացիկ վճարը հասնում է 5,2 մլն դոլարի: Վճարումները կատարվում են ըստ ժամանակացույցի, եւ «Հայռուսգազարդը» փորձում է տեղավորվել դրա մեջ: Ապրանքային մասով պարտքերը հասնում են 17 մլն դոլարի (առանց ժամանակացույցի), որից 5 միլիոնն արդեն առաքված է:

Մեր կողմից ավելացնենք, որ գազի մոտ 80 տոկոսի սպառողը Հայաստանի էներգետիկ համակարգն է: Երեկ էներգետիկայի նախարարը պարզաբանեց, որ գազի դիմաց Հայաստանի ընթացիկ վճարումները մի փոքր ուշացել են համակարգի դեբիտորների վճարումների ուշացման պատճառով: Նախարարը հավաստիացրեց, որ խնդիրը շուտով կհարթվի: Մանավանդ որ դա առաջին դեպքը չէ. «Դուք տեսնում եք, որ կա գազ եւ լույս, բայց թե ինչպե՞ս է դա կող տարի հարկերը էապես կաճեն, եթե վերոհիշյալ փոփոխությունների փաթեթը կառավարությունը ընդունի:

Ինչ վերաբերում է այս տարվան, նախարարը խոստացավ. «Այնպես կանենք, որ բյուջեի ճեղքվածքը մինիմումի հասցվի»: Համենայն դեպս, «բյուջեի սեկվեստրը չի լինի», վճռականորեն եզրափակեց Ե. Զախարյանը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Խառնաափոթը ռոդեավճարի հաշիվներում չի վերացել

Շրջանառվում է խոսակցության ժամկետը «ճշտող» գաղափարը

Արդեն չորրորդ օրն է, ինչ փոստային բաժանմունքներում ստացվել են ռոդեավճարի հաշիվները եւ արդեն չորրորդ օրն է, ինչ բաժանորդները շարունակում են իրենց դժգոհությունն արտահայտել ոչ միայն դրանց առկայությունից, այլ նաեւ այն խառնաափոթից, որ տիրում էր ներկայացված հաշիվներում: Եթե առաջին օրը դա ներկայացվում էր որպես բաժանորդային վճարի, ռոդեավարձի եւ միջքաղաքային խոսակցությունների ընդհանուր գումար, ապա այժմ այլ «հայտնագործություն» է արվում: Բաժանորդներին ասվում է, որ դա միայն բաժանորդային եւ միջքաղաքային խոսակցությունների ընդհանուր վարձն է: Ռոդեավճարի մասին ընդհանրապես ոչինչ չի ասվում: Այս մասին փորձեցինք տեղեկություններ ստանալ «Արմենտելից», որտեղ հերքեցին նման հաշիվների գոյությունը, սակայն հաստատեցին, որ բոլոր վճարները, այդ թվում նաեւ ռոդեավճարը, միասին են գրվել: Ընկերության ներկայացուցիչը հնարավոր համարեց, որ դրանք կառանձնացվեն: Այնուամենայնիվ, գլխավոր հարցը մնում է: Այն է, թե ինչպես բաժանորդը պետք է իմանա իր խոսակցությունների ժամանակը, երբ դրանք հաշվարկում է միայն «Արմենտելը», ի՞նչ երաշխիք, որ այդ հաշիվները ճիշտ կլինեն, եւ ի վերջո, ի՞նչ չեն դեպքերը, երբ խոսակցություն չեն ունենում, բայց հաշիվներ ստանում են:

Եթե այժմ միջքաղաքային խոսակցությունների ժամանակ նման փաստեր լինում են, ապա ռոդեավճարի կիրառման դեպքում դրանք անկասկած կլինեն: Դժվար է ասել, թե ինչ հույսերով ու հիմնավորմամբ է «Արմենտելը» փորձում պարտադրել մեզ ռոդեավճարը, բայց թյուրիմացությունները ճշտելու համար, ըստ շրջանառվող տեղեկությունների, «հանձարեղ» լուծում է գտնվել: Բաժանորդը, ճշտելու համար, թե ինքը որքան է խոսել, պետք է «Արմենտելի» տարածքային բաժանմունքում համապատասխան գումար վճարի, այսպես կոչված, ծառայության համար: Այսինքն՝ վճարիր, որպեսզի իմանաս, թե որքան պետք է վճարել եւ գլխավորը, վճարիր իմ հնարավոր սխալի պատճառով:

Ակնհայտ է, որ սա կլինի հաջորդ քայլը, եթե «Արմենտելին» հաջողվի «անցկացնել» ռոդեավճարը: Եվ բացառված չէ, որ դա տեղի կունենա, հանգի սպառողի շահերի պաշտպանության վերաբերյալ որեւէ խոսք ոչ պայմանագրում, ոչ լիցենզիայում գոյություն չունի:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հարթվեց «Էրեբունի բազա» առեւտրի կենտրոնի խնդիրը

Վերջին օրերին մի շարք լրատվական միջոցներ անդրադարձել են Երեւան քաղաքի Արինբերդի 14 հասցեում գործող «Էրեբունի բազա» առեւտրի կենտրոնի շուրջ ծավալված իրադարձություններին: Իրականությունն այն է, որ լուրջ կասկածներ կային այս կենտրոնում կատարվող սվերային շրջանառության վերաբերյալ, ինչը ճշտելու նպատակով պետեկամուտների նախարարության աշխատակիցներն առեւտրի կենտրոնում ցանկացան կատարել չափագրում: Կենտրոնի տնօրինությունը՝ խոչընդոտելով պետեկամուտների նախարարության աշխատակիցների օրինական գործողությունները, կազմակերպեց գործադուլ եւ տեղում աշխատող իրանցի գործարարներին դրդեց խնդրին տալ քաղաքական երանգ: Պետեկամուտների նախարարի եւ Հայաստանում Իրանի դեսպանատան ներկայացուցիչների հանդիպումից հետո երեկվանից իրանցի գործարարները շարունակեցին մեկ օրով ընդհատված իրենց գործունեությունը՝ հասկանալով, որ խնդիրը վերաբերում է բացառապես հարկային պարտավորությունների կատարմանը եւ իրական շրջանառությունների ճշտմանը:

ՊԵՆ-ը հայտնում է իր հետեւողականությունն ապօրինի ձեռնարկատիրական գործունեության հայտնաբերման ուղղությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր լիազորությունների շրջանակներում:

ՊԵՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Գյուղփոխօգնության բանկը խոստանում է գյուղացու մատից փուշ հանել

Հայաստանի «Գյուղփոխօգնության» բանկը Գեղարքունիքի մարզում սկսում է իր գործունեությունը: Այս նպատակով մարզում էին բանկի ներկայացուցիչները: Մարզպետարանում համայնքների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին եւ պարզաբանվեցին բանկի գործունեության մեխանիզմները, գյուղացի-համայնք-բանկ շղթայի համագործակցության սահմանները: Բանկի ներկայացուցիչների տեղեկությամբ, համայնքներում պետք է ստեղծվեն փոխօգնության միավորներ, որոնք կերաշխավորեն տվյալ գյուղացու վարկավորումը եւ հետագայում պատասխանատվություն կզգան վարկը վերադարձնելու համար: Եթե տվյալ համայնքի գյուղացին չկատարի իր վարկային պարտավորությունները, հետագայում վարկավորումից կզրկվի ամբողջ համայնքը: Վարկերը տրվելու են տարեկան 16-20 տոկոսադրույքներով, լինելու են կարճաժամկետ եւ երկարաժամկետ: Ամենաերկարը լինելու է 24 ամիս: Գումարային առումով բանկը վարկավորելու է 150-ից մինչեւ մի քանի տասնյակ հազար ԱՄՆ դոլար, փոխարենը գրավ է վերցնելու գյուղտեխնիկա, հող, անասուն, բնակարան:

Բանկի տնօրեն պարոն Գիշյանը նշեց, որ սա եզակի հնարավորություն է գյուղացիների համար զարգացնելու տնտեսությունը: Ուղղակի պետք է աշխատել իրար վստահելով՝ պահպանելով համագործակցության բոլոր կանոնները: «Իսկ որ բանկը կպահի այդ կանոնները եւ կաշխատի շատ մաքուր, ես դա հայտարարում եւ վստահեցնում եմ: Չի լինի այնպիսի մեկը, որից մեր աշխատողները «վերաբերմունք» պահանջեն», նշեց բանկի տնօրենը: Իսկ բնական աղետների դեպքում բանկը զիջման չի դիմի: Վարկը, միեւնույն է, պետք է վերադարձվի: Բանկը մարզում կվարկավորի նաեւ ոչ գյուղատնտեսական ծրագրեր, սակայն այլ պայմաններով:

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Զեղչումներ

Կյանքի ներդաշնակ զարգացումը՝ հասարակության առաջընթացի երաշխիք

Տիգրան Կարապետյան - «ԱԼՍ հոլդինգ»-ի (հեռուստատեսություն, ռադիո, թերթ) տնօրեն: Ծնվել է 1945 թ. Երեւանում: Սովորել է Գոգոլի անվ. թիվ 35 դպրոցում: Հայրը խորհրդային շախմատիկ պատմագիտ է եղել, մայրը ուսուցչուհի: Ավարտել է Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտը հեռուստաժուռնալիստիկա մասնագիտությամբ: Աշխատակցել է «Կոմսոմոլեց» թերթին: 1987 թ. մեկնել է Վոլգոգրադ: 1987 թ. Ռուսաստանում կազմակերպում է արտադրություն, ֆինանսական հաջողություններ է ունենում 90-ական թվականներին, ինֆլյացիայի տարիներին, երբ «փողն արժեզրկվում էր, եւ մարդիկ ավելի շատ պորանք էին գնում»:

Այս տասը տարիների ընթացքում նա մի քանի անգամ ցանկություն է ունեցել Հայաստան գալու, բայց գործարար մարդուն անհրաժեշտ բավարար պայմանների վստահության բացակայության պատճառով չի վերադարձել: Տիգրան Կարապետյանը գործարար աշխարհի այն մարդկանցից է, որոնց կարծիքով վերջին տարիներին երկրի ներքին կայունությունը վստահության երաշխիքներ է ստեղծում հայրենիքում գործելու եւ ներդրումներ կատարելու: «ԱԼՍ հոլդինգ»-ը (առայժմ հեռուստաընկերություն) նպատակադիր է իր աշխատանքը կառուցել սկզբունքային եւ կառուցողական քննադատությամբ՝ ի շահ հասարակության, մերժելով հեղափոխական գործելակերպը, գտնելով, որ այսօր մեզ անհրաժեշտ է հասարակական, քաղաքական բոլոր ուժերի համախմբում-համագործակցում:

Ուսումնասիրելով քաղաքական եւ լրատվական հայաստանյան այսօրվա դաշտը՝ «ԱԼՍ հոլդինգ»-ի տնօրենը գտնում է, որ ինքը լիարժեքորեն կարող է մրցակցել, գոյատեւել եւ բարգավաճել այստեղ: Ֆինանսական անկախությունը, իշխանական որեւէ թեւի հովանավորությունից չօգտվելը կապահովեն հեռուստատեսության անկողմնակալ, օբյեկտիվ տեղեկատվությունը, որը չի ունենա քարոզչական նպատակներ, լուրջ վերլուծություններով եւ հրապարակախոսական բնույթի հաղորդումներով կնպաստի հասարակական կյանքի առաջընթացին՝ ապահովելով ուղղակի կապը հասարակության տարբեր շերտերի եւ իշխանությունների միջեւ: Իբրեւ քաղաքական որեւէ ուժի հետ չհամագործակցելու ապացույց կարելի է համարել մինչ օրս իշխանական մարմինների անտարբերությունը եւ առայժմ հեռուստատեսության արտոնագիր չունենալը:

Հեռուստատեսությունը կգործի արտոնագիր ստանալուց անմիջապես 15-20 օր հետո՝ ստեղծելով շուրջ 250 աշխատատեղ: Հոկտեմբերի 1-ից այստեղ աշխատում է 47 մարդ՝ բարձր աշխատավարձով, մինչեւ նոյեմբերի 1-ը կընդունվի եւս հարյուրը: Մրցութային հիմունքներով կընտրվեն 20-30 լրագրողներ, նախապատվությունը կտրվի լուրջ, պրոբլեմային հարցադրումներին: Ամբիոնը աշխատել: Ես ասելիք ունեմ, գաղափարներ, որ կուզենայի սեփական հեռուստատեսությամբ հասցնել հանրությանը: Սա կլինի հանրապետությունում առաջին հեռուստատեսությունը, որ ինքնաբավ է, որեւէ կուսակցությունից կամ իշխանությունից անկախ է:

– Ինչպե՞ս կվարվեք, եթե Հայաստանում չկարողանաք իրականացնել ձեր ծրագրերը:

– Ես կպայքարեմ, եթե չհաջողվի, կվերադառնամ Ռուսաստան եւ կենտրոնական մամուլով հայերին կտեղեկացնեմ, որ Հայաստանում առայժմ չեն գործում գործարարներին տրվելիք երաշխիքները, որպեսզի վերադառնալ ցանկացողները դեռ չգան՝ ժամանակի եւ ֆինանսների կորուստներ չունենալու համար:

– Արտագաղթի այս պայմաններում ձեր վերադարձը Հայաստան հուսադրող է: Ի՞նչ կասեք Ռուսաստան արտագաղթող հայերի հոծ զանգվածի մասին: Արդարանո՞ւմ են նրանց սպասելիքներն այսօր:

– Մի քանի տարի առաջ կասեի՝ այո: Այսօր շատ դժվար է պատկերացնել՝ ինչպես ապրեցին ռուսական մշակույթի հետ, լեզու սովորեցին, աշխատի տեսան, փորձ ձեռք բերին: Ես կարծում եմ 2-3 տարվա ընթացքում 50 տոկոսը կվերադառնա: Արտագաղթը կկասեցվի, անկասկած, եթե բավարար վարձատրվող աշխատատեղեր այստեղ ստեղծվեն: Ասեմ, որ եթե Վոլգոգրադում 100 դոլար աշխատավարձ էի տալիս, այստեղ վճարում եմ 200 դոլար եւ ավելին:

– Բարեգործությունը ձեր կյանքում:

– Շատ եմ արել եւ շարունակելու եմ: Պետական համալսարանի ժուռնալիստիկայի եւ սոցիոլոգիայի բաժինների 4-րդ կուրսի ուսանողներին անցյալ ամբողջ ուսումնական տարին տվել եմ կրթաթոշակ, ֆինանսավորել եմ ազգային մշակութային արժեք ունեցող մի շարք հրատարակություններ («Արցախի գանձերը» Շահեն Մկրտչյանի հեղինակությամբ), 1700-ամյակի առիթով Մայր աթոռ սբ. Էջմիածնին փոխանցել եմ 17000 դոլար՝ գրքի հրատարակման համար: Համակարգերը փոխվում են, քաղաքական գործիչները գնում-գալիս են, բայց եկեղեցին մեր ազգային հոգեւոր արժեքն է հարատեւող:

– Խոսեցիք մշակույթի մասին, ինչպիսի՞ն է մշակութային կյանքն այսօր Հայաստանում ձեր կարծիքով:

– Շատ բարձր եմ գնահատում արվեստը, կարեւոր եմ համարում գիտական մտքի զարգացումը: Սակայն այսօր հայկական մշակույթը վաճառվում է գրանտներով: Ես լավ գիտեմ աշխարհը, եւ յուրաքանչյուր պետություն դրամաշնորհ տրամադրելով՝ որոշակի նպատակներ է հետապնդում (տեղեկություններ սակայն, խաթարել ազգային արժեքները, պրոպագանդել իր մշակույթը եւ այլն): Սովորականներին է տրված առաջատարը լինելու առավելությունը ազգային արժեքները պահպանելու եւ զարգացնելու առումով: Եթե այսօր նրանք մտահոգված են գրանտներով, բաց են թողնում պատմական ժամանակահատվածի այս «տարածքը»: Վաղվա սերնդի համար՝ եթե անհրաժեշտ լինի այս ճգնաժամային փուլի նկարագիրը, տեղը դատարկ կլինի, ֆիքսված չի լինի ոչինչ, կամ գրեթե ոչինչ: Երբ համալսարանի այսինչ բաժինը «պրում է» Հոլանդիայի նախագծով, մյուսը՝ մեկ այլ երկրի, գուցե ճարահատ, բայց միեւնույն է, պապագայում տանուլ տվածը շատ է լինելու: Կան ազնիվ մասնավորականներ, բայց քիչ են, ուստի եւ առաջընթաց չկա: Ես կարծում եմ, որ հասարակության առաջընթացը կարող է ապահովվել կյանքի բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացմամբ միայն, երբ տնտեսությունը, մշակույթը, հասարակական ներքին կյանքը, դեմոկրատական պրոցեսները ընթանան զուգահեռ եւ այս ամենի հիմքում լինի սթափ գիտակցությունը եւ պետական մարմինների անաչառ վերաբերմունքը բոլորի նկատմամբ:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Բաշխիչ ցանցերի վաճառք: Դարձյալ քաղաքական որոշում Չի՞ կրկնվի «Արմենտելի» նախադեպը

Հայաստանի գազամատակարար ռուսական «Իտեռա» կորպորացիայի օրերս արած հայտարարությունը՝ գազի մատակարարման դադարեցման մասին, բոլորովին էլ անսպասելի չէր: Նման հայտարարություններ էլի էին եղել, մասնավորապես այս տարեսկզբին, երբ էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը պետք է մտներ վերջնական փուլ, ու մարտի վերջին հայտարարվեր երեք հավակնորդներից՝ շվեյցարական ABB, ամերիկյան AES եւ իսպանական «Union Fenoza» ընկերություններից հաղթողի անունը: Ինչպես հայտնի է, ԲԷՑ-երի վաճառքի այդ փուլում նույն «Իտեռա» ընկերությունը մրցույթից դուրս էր մնացել, ինչն առիթ տվեց Հայաստանում որոշ քաղաքական կուսակցությունների՝ ՀԴԿ, ՀԿԿ, ՀԺԿ, ՍԻՄ, ակտիվացման եւ «համժողովրդական» հավաք-հանրահավաքների՝ ընդդեմ բաշխիչ ցանցերի վաճառքի: Ինչպես հայտնի է, ԲԷՑ-երի միջազգային մրցույթը տաղալվեց ու հետաձգվեց մինչեւ տարեվերջ:

Քանի որ արդեն կար նախադեպը, այս անգամ էլ դժվար չէր ենթադրելը, թե ո՞րն էր ռուսական ընկերության հերթապահ հայտարարության դրդապատճառը՝ մեկ անգամ եւս հիշեցնել ու ազդարարել ռուսական հզոր լծակի եւ այն մասին, որ ՌԴ-ն շարունակում է դոմինանտ դեր խաղալ Հայաստանի էներգետիկ համակարգում՝ մնալով վառելիքի մատակարարման մոնոպոլիստը: Լուրն, իհարկե, մեկ օր հետո հերքվեց, գազի մատակարարումը չդադարեցվեց, այլ միայն երեկ գազի ծավալները պակասեցին, փոխարենը ստացվեց հայտարարության անհրաժեշտ ազդեցությունը: Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարությունը վերջնական որոշում կայացրեց ռուսական «ՌԱՕ ԵԷՍ» ընկերությանը նախարակավորված ընկերության կարգավիճակ տալու մասին, ինչի մասին դեռ կասկածում էր մի քանի շաբաթ առաջ:

Այժմ արդեն Արշակ Սադոյանն ու դեմկուսի ղեկավար Արամ Սարգսյանը ստիպված չեն լինի հանրահավաքներում հայտարարել՝ «ո՛չ ցանցերի սեփականաշնորհմանը, այո՛ Հայաստանի անկախությանը», եւ քաղաքական հայտարարությունների համար տնտեսական «հիմնավորումներ» բերել: Ոմանք այժմ պետք է, որ գոհ եւ բավարարված լինեն, քանի որ ցանցերի վաճառքի այս փուլում փաստացի միակ հավակնորդը մնացել է ՌԱՕ ԵԷՍ-ը, որն էլ, ենթադրաբար, կդառնա ԲԷՑ-երի սեփականատերը, քանի որ մյուս երեք նախարակավորած ընկերությունները՝ ABB-ն, AES-ն (պատճառներ) ու «Union Fenoza»-ն (առայժմ ոչ պատճառներ) հրաժարվել են մրցույթին մասնակցելուց: Մրցույթի այս փուլը մեկ անգամ եւս ապացուցեց, որ առաջին՝ արեւմտյան ընկերությունները ամենեւին էլ ոգեւորված չեն հայաստանյան ցանցերով ու ներդրումներով, երկրորդ՝ ՀՀ իշխանությունները հերթական անգամ տնտեսական հարցին ստիպված էին տալ քաղաքական լուծում:

Որ ԲԷՑ-երի վաճառքը տնտեսական ռազմավարական խնդրից վերածվել էր աշխարհաքաղաքական խնդրի ու հայտնվել քաղաքական շահերի կիզակետում, ակնհայտ էր դեռ տարեսկզբին: Կառավարությունը այն ժամանակ հայտնվել էր երկակի վիճակում: Մի կողմից՝ ռուսական գործոնն ու ահռելի պարտքը, որ կուտակվել էր տարիների ընթացքում՝ հասնելով մինչեւ 117 հազ. դոլարի, մյուս կողմից՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ USAID-ի ու Եվրաբանկի ճնշումները, որոնցից առաջին երկուսը սանձնել էին սեփականաշնորհման խորհրդատուի դերը՝ դրան ուղղելով պատկառելի գումարներ ու աշխատակազմ, իսկ երրորդը պատրաստվում էր գնել ցանցերի բաժնետոմսերի 20 տոկոսը: Այս երեքից հատկապես ՀԲ-ն չէր թաքցնում իր դիրքորոշումն ու պայմանները: Բանկը մի քանի անգամ հայտարարել էր, որ ԲԷՑ-երի վաճառքը պետք է լինի միջազգային մրցույթի պայմաններով, բաց ու թափանցիկ, «ցուցադրական» մասնավորեցում եւ լավագույն օրինակ արտասահմանյան ներդնողների համար: Բանկը պայմանականորեն հարցի հետ կապում էր նաեւ SAC-4 վարկի ստացումն ու նրա 20 մլն «լողացող» տրանշը, որը պետք է ստացվեր միայն ԲԷՑ-երի վաճառքի մասին բանկի դրական գնահատականի դեպքում: Ինչպիսի՞ն է ՀԲ գնահատականը մրցույթի նախարակավորման փուլի մասին: Առայժմ բանկը լռում է, ինչը նման է դժգոհության:

Ինչ վերաբերում է ԲԷՑ-երի վաճառքի տնտեսական արդյունավետությանը, ապա ստիպված ենք հիշել դրա անհրաժեշտության մասին ՀՀ իշխանությունների հիմնական պատճառաբանությունը՝ էներգետիկ համակարգում, մասնավորապես բաշխիչ ցանցերում, գերնորմատիվային կորուստները հասել են ահռելի չափերի՝ տարեկան 40-50 միլիոն դոլարի: Դրանք պատճառաբանվում են ցանցերի ֆիզիկական եւ բարոյական մաշվածությամբ եւ էներգետիկ համակարգերի արդիականացման համար անհրաժեշտ գումարների բացակայությամբ: Սակայն այդ գումարներն էլ դրվում էին ԲԷՑ-երի վաճառքի հիմքում, որոնք պետք է ձեռք բերվեին ապագա գնորդի ներդրումների ձեւով: Այսօր արդեն դժվար չէ ենթադրել, թե ցանցերի հանձնումը ռուսական ընկերությանը, որի մոտ 75 տոկոս բաժնետերը պետությունն է, ներդրումայի՞ն գործարք է լինելու, թե՞ սեփականաշնորհում՝ պարտքի դիմաց (նշենք միայն, որ ՌԱՕ ԵԷՍ-ն ինքն, ունենալով ֆինանսական խնդիրներ, վերջերս է դիմել Եվրաբանկին՝ 100 մլն. դոլար ստանալու համար): Համենայն դեպս, ԲԷՑ-երի վաճառքին զուգահեռ կատարված իրադարձությունները ապացուցում են, որ ՀՀ կառավարության դիրքորոշումը հակված է դեպի երկրորդը: Հիշեցնենք, որ իրավիճակը կտրուկ փոխվեց ամռանը Ռուսաստանի կարծր դիրքորոշմամբ՝ էներգետիկ համակարգի պարտքերի վերադարձման մասին պահանջներով: Այն ժամանակ հարցը հստակ էր դրված, կա՛մ էներգակիրները, կա՛մ պարտքը: Հարցի լուծումը, փաստորեն, վերջնականապես եղավ ՌԴ նախագահի այցից հետո:

ԲԷՑ-երի մասնավորեցումը ակամա հիշեցնում է «Արմենտելին»: Այս ընկերության ներկայացուցիչները բազմիցս հայտարարել են, որ 142 մլն դոլար աննախադեպ գումարով հայաստանյան մաշված ու քայքայված հեռահաղորդակցության ցանց գնելը հունական OTE պետական ընկերության կողմից ավելի շուտ քաղաքական քայլ էր՝ ի նշան հայ-հունական բարեկամության: Թե ի՞նչ ստացվեց այդ քաղաքական որոշման արդյունքում, եւ ինչքա՞ն թանկ նստեց Հայաստանի վրա այդ վաճառքը, կարծում ենք հիշեցնելու կարիքը չկա: Ի՞նչ կստացվի տնտեսական խնդրի քաղաքական այս մյուս որոշումից, ժամանակը ցույց կտա:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՉՅԱՆ

ԱԶԳ

Ահաբեկչություն

Սեպտեմբերի 11-ի ողբերգական իրադարձություններից հետո Մ. Նահանգների սանձազերծած պատերազմն ահաբեկչության դեմ տարաբնույթ կարծիքների տեղիք է տալիս ամբողջ աշխարհում, եւ եթե որոշ ամերիկամետ երկրներ պաշտպանում են նրա գործողությունները, ապա մյուսները դատապարտում են նրա քայլերը եւ բացում անցյալի, գուցե եւ անցանկալի, «վերքերը»: Ինտերնետային ցանցից մեր ձեռքն անցած նման հոդվածներից մեկում ամերիկացի բոլշակառու, ազգային անվտանգության հարցերի գծով դասախոս, լեյտենանտ-գնդապետ **Ռոբերտ Բոումանը** «Նեղնել կաթոլիկ ռիփորթում» գրում է, որ եթե ահաբեկչության շուրջ պտտվող «խաբեությունները մնան անպատասխան, ապա սպառնալիքները շարունակվելու են այնքան ժամանակ, մինչեւ խորտակեն բոլորիս»: Այնուհետեւ նա շարունակում է. «Պարզապես պետք է իմանանք ճշմարտությունն այդ սպառնալիքների մասին: Աֆղանստանն ու Սուդանը ռմբակոծելիս նախագահ Բուշն ամերիկացի ժողովրդին չասաց ամբողջ ճշմարտությունը: Նա պարզապես ասաց, թե Ամերիկան ահաբեկչության թիրախ է դարձել, որովհետեւ ամուր կանգնած է ժողովրդավարության, ազատության եւ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության դիրքերի վրա: Հիմարություն: Մենք թիրախ ենք դարձել, որովհետեւ աշխարհի շատ երկրներում բռնատիրությունը, սրկությունն ու մարդկանց շահագործումն ենք ջատագովում: Որովհետեւ մեր կառավարությունն ատելի արարքներ է թույլ տալիս: Քանի՞ երկրներում է մեր կառավարությունը տապալել ժողովրդի կողմից ընտրված առաջնորդներին եւ փոխարենը աթոռին նստեցրել մարիոնետային բռնապետների:

Նման արարք մենք գործել ենք Իրանում Մուսադեկին վայր գցելով, որովհետեւ նա ցանկանում էր ազգայնացնել նավթային արդյունաբերությունը, ապա Չիլիում եւ Վիետնամում, բազմիցս Նիկարագուայում եւ Լատինական Ամերիկայի այլ երկրներում: Փորձել ենք անել Իրաքում:

Այդ երկրներում մենք խափանել ենք ժողովրդավարության ծաղաղարը, խեղդել ազատությունը եւ ոտնակոխ արել մարդու իրավունքները: Կանադայի, Նորվեգիայի եւ Շվեդիայի ժողովուրդները վայելում են իրենց ժողովրդավարությունը, ազատությունը եւ մարդկային իրավունքները: Լսե՞լ եք երբեւէ, որ այդ երկրների դեսպանատները ռմբակոծվեն: Մեզ ասում են, որովհետեւ մենք այդ իրավունքներից զրկում ենք երրորդ աշխարհի երկրներին, որպեսզի մեր կորպորացիաները օգտվեն դրանց բնական հարստություններից: Մեր ցանած ատելությունը մեր դեմ է ուղղված՝ ահաբեկչության տեսքով: Եթե այս ճշմարտությունը հասկանանք, հեշտ կլինի լուծում գտնել: Մենք պարզապես պետք է փոխենք մեր գործելակերպը: Աղակայունացնելու փոխարեն կայունացնենք դրությունն այդ երկրներում, չարիքի փոխարեն բարիք սերմանենք»:

«Չարի ու բարու» ներկայացման մեջ որտե՞ղ է ճշմարտությունը

Կամ ո՞ւմ դեմ ենք կռվում

Չարի ու բարու այս թեման առավել հաջողությամբ զարգացնում է իտալացի լրագրող **Էդուարդո Գալեանոն**՝ «Լա Ջոռնադա» թերթում գրելով «Բարու եւ չարի թատրոնը» վերնագրով հոդվածը:

«Բարու եւ չարի պայքարում միշտ հասարակ ժողովուրդն է տուժում, սպանվում: Հանուն բարու հաղթանակի նախագահ Բուշը վրեժ լուծել է խոստանում, բայց հայտնի է, որ ոչ միայն կրոնական մոլեռանդները կարիք ունեն բշնամիների, այլեւ Մ. Նահանգների հսկայական ռազմարդյունաբերությունը եւ այսպես կոչված «պատերազմի մեքենան»՝ արդարացնելու համար իրենց գոյության խելացնորությունը:

Լավն ու վատը, չարն ու բարին հաճախ են դիմակներ փոխում», այնուհետեւ գրում է հեղինակը՝ բերելով հետեւյալ օրինակները. «Գերմանացի գիտնական Վերներ ֆոն Բրաունը վատն էր, երբ ստեղծեց V-2 ռմբարկուները, որոնք Հիտլերի կողմից օգտագործվեցին ռմբակոծելու Լոնդոնը: Հետագայում, սակայն, նա լավը դարձավ, երբ իր տաղանդը դրեց Մ. Նահանգների տրամադրության տակ: Սադդամ Հուսեյնը լավն էր, երբ քիմիական զենք էր օգտագործում իրանցիների եւ քրդերի դեմ: Դարձավ վատ եւ անվանվեց Սատանա Հուսեյն: Հայր Բուշը սանձնեց չարին պատժելու առաքելությունը, 100 հազար իրաքցիների սպանեց, որոնց մեծ մասը հասարակ քաղաքացիներ էին: Այժմ Ուսամա բեն Լադենն է թիրախ դարձել: ԿՀՎ-ն նրան սովորեցրեց ահաբեկչության գաղտնիքները, որպեսզի Աֆղանստանում պայքարի կոմունիզմի դեմ: Հայր Բուշը փոխնախագահի պատասխանն էր վարում Ռեյգանի օրոք, երբ վերջինս նրանց (բեն Լադենի խմբին) անվանեց «Մ. Նահանգների հիմնադիր հայրերի բարոյական հավասարները»: Հոլիվուդը նույնիսկ ֆիլմ նկարահանեց՝ «Ռեմբո-3»-ը, որտեղ Աֆղանստանի մահմեդականները «լավ տղերք» են: Այժմ՝ տասներեք տարի անց, որդի Բուշի օրոք նրանք «ամենավատ տղերքն են»:

Հենրի Քիսինջերն առաջիններից էր, որ արձագանքեց սեպտեմբերի 11-ի դեպքերին՝ ասելով. «Նրանք, ովքեր պատասխանում, քիչանսավորում եւ ներշնչում են ահաբեկիչներին, նույնքան մեղավոր են, ինչքան ահաբեկիչներն իրենք»: Որդի Բուշը գիրը» գրել էր դրանից շատ առաջ, երբ ընտրությունների արդյունքն իմանալով, բացականչել էր. «Չգիտեմ ինչու, ծեռնածալ պետք է նստենք եւ տեսնենք, թե ինչպես է այդ երկիրը դառնում կոմունիստական»:

Ժողովրդի նկատմամբ արհամարհանքը բնորոշ է ինչպես անհատական, այնպես էլ պետական ահաբեկչությանը: Երկուսի համար էլ մարդկային կյանքն արժեք չունի: Եթե զույգ աշտարակների զոհերի թիվը 5500 հաղորդվեց եւ աղմուկ բարձրացվեց աշխարհով մեկ, ապա ինչ ասենք այն 200 հազար բնիկ գվատեմալացի զոհերի մասին, որոնք չարժանացան զանգվածային լրատվական միջոցների արձագանքին: Նրանց սպանեցին ոչ թե մոլեռանդները, այլ ահաբեկչական խմբավորումները, որոնց պաշտպանում, քիչանսավորում եւ ոգեշնչում է Մ. Նահանգների կառավարությունը: Դաժանությունը միշտ էլ դաժանություն է ծնում: Մ. Նահանգների դաժանություններն էին, որ Միջին Արեւելքում առաջացրին «սրբազան պատերազմ» մղելու պահանջը: Ի՞նչ է տեղի ունենում ի վերջո: Սխալների ողբերգությո՞ւն, որտեղ ոչ ոք չգիտի, թե ով ո՞վ է: Պայթյունների ծուխն այնքան թանձր է, որ չի թողնում մեզ հստակորեն տեսնելու, եւ վրեժխնդրության զգացումը երեւի թե մեզ բոլորիս առաջնորդի դեպի գերեզման:

Վերջերս մի նկար տեսա, որտեղ Նյու Յորքի շենքերից մեկի պատերին գրված էր «ակն ընդ ականն ամբողջ աշխարհն է կուրացնելու»:

Բռնության շղթան բռնությունից բացի նաեւ ցավ, վախ, շփոթություն, անհանդուրժողություն, ատելություն եւ խելացնորություն է պատճառում:

ԲԻՈՏԵՈՈՐԻԶՄ

Սանրէներ Կոնգրեսում

Ամերիկյան մի շարք ՁԼՄ-ների խմբագրատներում հայտնվելուց հետո սիբիրախտի մանրէներն իրենց սեւ գործը շարունակեցին ԱՄՆ Կոնգրեսի շենքում: Չորեքշաբթի առավոտյան, մոտավորապես ժամը 10-ին Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հաստերթը (հանրապետական, Իլինոյսի նահանգ) տագնապալի լուրերի ծնման ներքո որոշեց մինչեւ առաջիկա երեքշաբթի ընդհատել պալատի աշխատանքները, որպեսզի սանիտարական ծառայությունները հասցնեն ստուգումներ անցկացնել բոլոր կոնգրեսականների աշխատասենյակներում: Ավելի վաղ Հաստերթը տեղեկացել էր, որ Սենատում դեմոկրատական մեծամասնության նախագահ Թոմ Դաշլի քիմի երեք տասնյակ աշխատակիցներ, ըստ նախնական բուժզննումների, վարակված են սիբիրախտով:

Հաստերթը հայտարարեց, թե հիվանդության մանրէներ են հայտնաբերվել Կոնգրեսի զույգ պալատների շենքերի օդափոխման համակարգում: Ներկայացուցիչների պալատում դեմոկրատական փոքրամասնության ղեկավար Դիկ Գեփարդը (Միսուրիի նահանգ) հավանություն տվեց Հաստերթի որոշմանը, այն անվանելով «խելամիտ»:

Երեք ժամ անց սենատորները որոշեցին, որ իրենք չեն հետեւի Ներկայացուցիչների պալատի անդամների օրինակին: Թոմ Դաշլը հայտարարեց, որ անձամբ կվերահսկի Սենատի հետագա աշխատանքը: Կոնգրեսի վերին պալատը՝ Սենատը, ԱՄՆ նախագահի հետ պատասխանատու է արտաքին քաղաքականության համար: Սենատորները պատերազմական այս օրերին չեն ուզում տեղի տալ խուճապային տրամադրություններին, չնայած իրենց գործընկերների վարակման փաստին: Ի դեպ, սենատորները հերքեցին այն լուրերը, թե սիբիրախտի մանրէներ են հայտնաբերվել օդափոխման համակարգում: «Լիբերատորիոն» թերթը գրում է, որ ամերիկյան կաթոլիկ հեռուստաալիքները եւ ռադիոկայաններն անդադար հաղորդումներ են հեռարձակում Կոնգրեսում տիրող խուճապային մթնոլորտի մասին:

Նյու Յորքի նահանգապետ Ջորջ Պատակիի գրասենյակում մանրէների հայտնաբերումն էլ ավելի խորացրեց ամերիկացիների մտահոգությունը: Պատակին որոշեց մինչեւ երկուշաբթի փակել իր գրասենյակը: Բժիշկներն սկսել են հակաբիոտիկներ տալ նրա աշխատակիցներին:

Պ. Բ.

Տեղուրանները քաղաքական միջոց չեն

Սկիզբը էջ 1

Կայնասունի հարցում ադրբեջանցիներին են միանում թուրքերը, որոնք իրենց հերթին մոռանում են Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած ակնհայտ բշնամական քաղաքականությունը, ինչն իր արտահայտությունն է գտնում մեր հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների համառ մերժման, նրա երկարատեւ շրջափակման եւ մշտապես սպառնալու դրսեւորումներում: Որքան էլ թուրքական սպառնալիքները նպատակին չծառայեն, այնուամենայնիվ, դրանք Հայաստանն ահաբեկելու յուրօրինակ փորձեր են: Ուրեմն, եթե միջազգային հանրության ահաբեկումն ԱՄՆ-ի համար հակաահաբեկչական պատերազմի միջոց է, սահմանակից պետության մշտական ահաբեկումն էլ պետք է համարել վերջինին ահաբեկիչ որակելու թուրքական միջոց: Ինչ վերաբերում է դրա օգտագործման արդյունավետությանը, ապա դա պայմանավորվում է ադրբեջանցիների հետ ջանքերի համատեղությամբ: Այսպիսով Հայաստանին ահաբեկչության մեջ մեղադրելու հարցում Ադրբեջանն ու Թուրքիան մրցակցում են:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Արմենպրեսի հոկտեմբերի 2-ի հաղորդագրությանը, որտեղ ասվում է, որ պաշտոնական այցով Անկարայում գտնվող Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը Հայաստանն անվանել է ադրբեջանական պետությանը սպառնացող թիվ 1 ահաբեկիչ, իսկ նրա թուրք գործընկեր Սաբահաթթին Չամմաղոլուն ավելացրել է. «Մենք միշտ ձգտելու ենք միջազգային իրավունքի եւ համաձայնագրերի հիման վրա Ադրբեջանի տարածից Հայաստանի դուրսբերմանը»:

Նույն աղբյուրի հոկտեմբերի 11-ի հաղորդագրությամբ՝ Ադրբեջանի արտգործնախարար Վիլայաթ Գուլիեւը հայտարարում է. «Մի օր Ադրբեջանը սխրված կլինի հրաժարվել խաղաղ բանակցություններից, եւ երբ մենք սկսենք դուրս անել ահաբեկիչներին մեր տարածից, ոչ ոք մեզ «ագրեսոր» չի անվանի»: Հաջորդ օրը Լեռնային Ղարաբաղում հակաահաբեկչական գործողություններ անցկացնելու թուրքերի պատրաստակամության մասին հայտարարությամբ Գուլիեւին է արձագանքում Թուրքիայի խորհրդարանի անդամ, «Մայր հայրենիք» կուսակցության փոխնախագահ Բյուլենթ Ամարջալը: Ավելին՝ երբ Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը Բրյուսելում ահաբեկչությանը նվիրված համագումարին պատրաստվում է հանդես գալ երեւանը որպես ՊԿԿ-ի կովկասյան կենտրոն դիտելու առաջարկով, թե քրդական այս կազմակերպությունը Հայաստանում իբր 4 ճամբար ունի, ահա, հոկտեմբերի 17-ին, Ադրբեջանի անկախության 10-ամյակի տոնակատարություններին, նախագահ Հեյդար Ալիեւը մի անգամ եւս կրկնում է բազմիցս ծամծմված այն մեղադրանքները, որոնք վերաբերում են ահաբեկչությանը Հայաստանի մտացածին առնչությանը:

Այս մեղադրանքները որեւէ հիմք ունենալ չեն կարող: Ուստի հերյուրանք են այն ասածները, որ դրանք հոկտեմբերի 16-ի հայտարարությամբ նույնիսկ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Վիլսոնն է մերժել: Նա միաժամանակ Բաքվում ընդգծել է. «Մ. Նահանգները չի պաշտպանի «հակաահաբեկչական» գործողությունն ընդդեմ Հայաստանի»: Հիշեցման կարգով նշենք, որ այդ նույն ԱՄՆ-ի պետդեպարտամենտը Հայաստանն անվանել էր «ագրեսոր» պետություն: Ուրեմն, Ադրբեջանն ու Թուրքիան որքան էլ նախագահ Բուշի վերոհիշյալ հայտարարությանը տուրք տալու պատրաստակամությամբ փորձեն շահարկել, թե իրենք ԱՄՆ-ի հետ են, միեւնույն է, շահարկումները նպատակին չեն ծառայում: Ինչ վերաբերում է հերյուրանքներին, ապա դրանք քաղաքական միջոց դառնալ չեն կարող, բայց միանգամայն կարող են երեւան հանել քաղաքականության մեջ հերյուրանքների վրա հենվելու սնանկությունը:

Ճգնաժամ OPEC-ի երկրներում

Արդեն երեք շաբաթ է, ինչ նավթի համաշխարհային գներն իջնում են: Ճգնաժամ առաջացնելով Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունում (OPEC): Դրա որոշ անդամներ առաջարկում են կրճատել նավթահանույթի ծավալները, որպեսզի գները բարձրանան: Սակայն մյուսները Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ մերժում են այդ առաջարկը, պնդելով, թե դա կարող է էլ ավելի աղակայունացնել արդեն իսկ ճգնաժամի եզրին հայտնված համաշխարհային տնտեսությունը եւ հարուցել ԱՄՆ-ի զայրույթը: Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեսն անցյալ օրը Վիեննայում՝ OPEC-ի նստավայրում հայտարարեց, որ հարկավոր է ոչ թե կրճատել նավթահանույթը, այլ «հարգել դրա սահմանված մակարդակը»:

Սեպտեմբերի 27-ին կայացած OPEC-ի վերջին նիստից հետո, երբ որոշվեց անփոփոխ թողնել նավթահանույթի ծավալները, երկպառակություններ ծագեցին կազմակերպության անդամների միջեւ: Բայց վեճերի գլխավոր հետեւանքն այն է, որ ընկել է կազմակերպության միջազգային հեղինակությունը, որը չի կարողանում իրագործել իր սպառնալիքները, մասնավորապես սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո:

Կազմակերպությունն ունի նավթահանույթի ծավալների կրճատման լավ մշակված մեխանիզմ, որը գործի է դրվում, «երբ ավելի քան 10 օր անընդմեջ մեկ բարել նավթի գինը 22 դոլարից ցածր է լինում»: Արդեն երկու շաբաթից ավելի է, ինչ այդ գինը մոտ 20 դոլար է, սակայն OPEC-ը համապատասխան միջոցներ չի ձեռնարկում, արձանագրում է «Լիբերատորիոն» թերթը:

OPEC-ի անդամ երկրներն են Ալժիրը, Ինդոնեզիան, Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Լիբիան, Նիգերիան, Քաթարը, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները եւ Վենեսուելան: Նրանք համատեղ արդյունահանում են ներկայումս աշխարհում վաճառվող նավթի ընդհանուր ծավալի 40 տոկոսը: Կազմակերպությունը փորձում է սերտացնել գործակցությունը նավթ արդյունահանող մյուս խոշոր երկրների Ռուսաստանի, Մեքսիկայի, Նորվեգիայի հետ, որպեսզի հնարավոր լինի խուսափել «գների պատերազմից»:

Պ. Բ.

ՄՇԱԿՈՒՅԹ

«Հայ-արտ» մշակութային կենտրոնում ներկայացված են գեղանկարիչ Ռուբեն Ադալյանի աշխատանքները, որոնք հավակնում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի: Հիմնականում վերջին երկու տարիների՝ 1999 եւ 2000 թ. գործեր են: Ադալյանական հանրահայտ ծիերի շարքից մեկ-երկու նկար, անցած ժամանակների մի քանի աշխատանքներ զուտ ճանաչողական իմաստ ունեն: Պետական մրցանակը շնորհվում է վերջին երկու տարիների ստեղծագործությունների համար, ուստի բացարձակ գերակշռությունը հենց նրանց է տրված: Անմիջապես այդի է զարնում կանանց դիմանկարների շարքը, դիմանկարներ, որոնք սոսկ կանացի հոգեվիճակների, բնավորությունների արտահայտություններ չեն: Դարձել են խորհրդանիշ: Ի դեպ, Ռուբեն Ադալյանը մեր ամենաբեղուն ստեղծագործողներից է: Արվեստասերների հիշողության մեջ դեռ թարմ է Ռուբեն Ադալյանի մեկ տարի առաջ կազմակերպած ցուցահանդեսը, որի ժամանակ ներկայացված 400 աշխատանքներից 200-ը նունպես 1999 եւ 2000 թ.թ. էին ստեղծվել:

Ընդհանրապես Ռուբեն Ադալյանի ստեղծագործությունը ինքնին այդի է զարնում լարված, տագնապալի իրավիճակների պատկերումը: Արվեստագետներից մեկն Ադալյանի աշխատանքները համեմատել է Վագների երաժշտության հետ: «Կա վագներյան մոլեգին երաժշտության զգացում, որ մերթ հզոր ակորդի դողանջով մոտենում է քեզ, մերթ հեռանում, բայց ոչ թե լքում, այլ պարուրում է քեզ կրքոտ հրապույրով ու կախարդանքով: Նկարչի գրաֆիկական սպիտակ ու գունավոր թերթերում պատկերված է կրքով, պայքարով, տագնապով, սիրով առլեցուն աշխարհը: Թվում է, թե դու ոչ միայն տեսնում, այլեւ լսում ես այդ ամենը»:

50-ականների վերջի եւ 60-ականների սկզբի հայ կերպարվեստի, մասնավորապես հայ գեղանկարչության հետաքրքիր պրոցեսների մեջ ծանրության կենտրոնը Ռուբեն Ադալյանի անվան վրա է: Ինչո՞ւ: Չէ՞ որ այդ ժամանակներում մենք շատ նկարիչներ ու քանդակագործներ ունեինք, որոնք կարող էին առանց հապաղումի ներկայանալ համաշխարհային հանրությանը: Արվեստաբան Պողոս Հայթայանն ունի այդ երեւույթի սեփական բացատրությունը:

– 20-րդ դարի երկրորդ կեսին մեր կերպարվեստ մուտք գործեց մի անհատականություն, որը բերեց դարի համաշխարհային գեղանկարչության մտածողության տարբեր շերտեր: Եվ մասնաբայնությամբ, եւ ենականությամբ, եւ ինքնակայությամբ այդ մակարդակի նկարիչ Ռուբեն Ադալյանն առանձնանում է իր սերնդակիցներից: Վերջինիս ստեղծագործությունը նաեւ էպոխալ նշանակություն ունի: Զարմացնում է նկարչի ապրած ժամանակի արտացոլումն իր ստեղծագործություններում: Ավանգարդիստներն այսօր խոսում են ստեղծագործական աշխատանքի համար թափած հսկայական ջանքերի մասին: Բայց խորհրդային բռնատիրական ժամանակներում Ռուբեն Ադալյանը կարողացավ տեղայնացնել, ազգայնացնել համամարդկային այնպիսի գաղափարներ, որոնց մասին արվեստի աշխարհի մարդիկ կարող էին միայն երազել: Իր ազգային դիմագիծը չկորցնելով, նա լայնացրեց համամարդկային մտածողության սահմանները:

Որքան էլ արժեքավոր ու համազգային է Ռուբեն Ադալյանի ստեղծագործությունը, այնուամենայնիվ, նա դեռ մնում է անչափ քիչ ուսումնասիրված, հետեւաբար եւ ներկայացված մեր գեղանկարիչներից ու քանդակագործներից մեկը: Կերպարվեստի բնագավառի մասնագետները անշուշտ բարձր են գնահատում Ռուբեն Ադալյանին: Սակայն նա՝ Ռուբեն Ադալյանը, չմտավ որեւէ երամի մեջ, որեւէ կլանի չհարեց:

– Այսօր շատ են խոսում քաղաքական եւ տնտեսական կլանային հակակարգի մասին, ասում է Պողոս Հայթայանը: Սակայն դրանք ծիծաղելիորեն պարզ ու միամիտ բաներ են՝ համեմատած արվեստի, մասնավորապես կերպարվեստի բնագավառում ստեղծված եւ 40–50 տարի գոյատեւած կլանի հետ: Կան ու եղել են նկարիչներ, որոնք շատ ավելի բարձր արժեք ունեն:

Դրանց թվում անշուշտ Ռուբեն Ադալյանն է: Սակայն նրա արվեստի ճանաչումը ողջ էությամբ չի կայացել այն պարզ պատճառով, որովհետեւ արվեստագետներից ոչ մեկը նրանով հատուկ չհետաքրքրվեց, թեեւ շատերը ճիշտ ու դիպուկ գնահատել են նրա ստեղծագործությունը: Համաշխարհային մշակույթի գիտակ Ալեքսանդր Կամենսկին Ռուբեն Ադալյանին համարում է հատուն ու խոր վարպետ, որը զարմանալի նրբազգացողությամբ է լսում ժամանակակից աշխարհի ողբերգական ձայները: Իսկ գեղանկարիչ Գեւորգ Գրիգորյանը (Ջիոսսո) գրում է. «Ռուբեն Ադալյանի արվեստը մեր ժամանակի զարկերակն է»:

Գրեթե 50 տարի առաջ (1952 թ.) առաջին ցուցահանդեսը բացած եւ անցած տարի գրաֆիկական աշխատանքներով արվեստասեր հանրությանը ներկայացած արվեստագետը վարպետորեն ստեղծագործել է գեղանկարչության, գրաֆիկայի, բարձրաքանդակի ու քանդակի ոլորտներում՝ միշտ էլ առաջադրելով եւ լուծելով կյանքի ու արվեստի բարդ խնդիրներ:

... Մի քանի օր առաջ է վերադարձել Մոսկվայից, որտեղ 5 ամսից ավելի ստեղծագործում էր: Աշխարհի տագնապներն իր մեջ առած, մարդկության ցավերն ու սլացքները, վայրէջքներն ու վերելքներն իր մեջ տանող արվեստագետն այնտեղ էլ՝ Մոսկվայում իմացել է, որ իր վերջին երկու տարիների աշխատանքները ներկայացված են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի նվաճման համար: Անշուշտ, սա արդեն կատարած աշխատանքի, վառած մոմի լույսի գնահատականն է, որը շոյող է ամեն արվեստագետի համար: Մի անակնկալ հարց տվեցի նկարչին՝. «Եթե այնպիսի պահ ստեղծվեր, որ հարկ լիներ հանելու Ձեր թեկնածությունը, ապա ու՞մ կուզեիք տեսնել մրցանակակրի դերում»:

– Դեռ Մոսկվայում էի, երբ իմացա, որ իմ գործերը գուցե ներկայացվեն պետական մրցանակի եւ չգիտեի, թե ովքեր եւս կլինեն ներկայացվածների թվում, ասում է Ռուբեն Ադալյանը: Եթե ինձանից ավելի արժանիին գտնեի, ապա իմ թեկնածությունը կհանեի: Ես նկատի ունեմ էդուարդ Էլիբեկյանին, որի ստեղծագործությունը բարձր եմ գնահատում:

1941 թվականից, արդեն 60 տարի, ստեղծագործում է Ռուբեն Ադալյանը: Այդ ժամանակում նա ստեղծել է 2 հազարից ավելի գործ: Իսկապես տիտանական աշխատանք:

Բազմաթիվ ցուցահանդեսների հեղինակ Ռուբեն Ադալյանի ստեղծագործությունները ցուցադրվել են Ավստրիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Գերմանիայում, Կանադայում, ուրիշ երկրներում: Նրա շատ աշխատանքներ պահպանվում են Հայաստանի Ազգային պատկերասրահում եւ թանգարաններում, ինչպես նաեւ հայրենի եւ արտասահմանյան մի շարք հավաքածուներում:

Արվեստագետի ես-ը ոչ միայն կայացել, այլեւ հաստատվել է: Ու հիմա այդ ես-ը հաստատվելու մի նոր առիթ է ներկայացել:

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Ներկայացված է ՀՀ պետական մրցանակի

Վագներյան երաժշտության հանգույն

Ռուբեն Ադալյանի ստեղծագործությունը

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԴԱՐԶ-1700

Բելառուսում հշվեց հոբելյանը

Մինսկում լույս է տեսել տեղական «Համաշխարհային գրականություն» ամսագրի հերթական համարը, որն ամբողջությամբ նվիրված է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի հոբելյանին: Հանդեսի վկայությամբ, թողարկումն իրագործվել է Բելառուսում ՀՀ դեսպանության աջակցությամբ եւ ֆինանսական օգնությամբ: Ընդսմին, խմբագրությունը նյութերի պատրաստման համար հատուկ շնորհակալություն է հայտնել Նինա Ասատուրի Հարությունյանին: Դատելով ազգանունից, կարելի է համոզված ասել, որ նա հայոց դեսպանի կինն է: Խրախուսելի է, որ Հայաստանի պատշգամբային դիվանագիտական ներկայացուցչի կինն իր ակտիվ հասարակական գործունեությամբ բարձրացնում է սեփական ժողովրդի եւ ամուսնու պատիվը:

Համարի հրատարակությունը ողջունել են ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Բելառուսում Հայաստանի դեսպան Սուրեն Հարությունյանը: Արդեն այս փաստը հուշում է, որ ձեռնարկումը դուրս է գալիս զուտ գրական-հասարակական երեւույթի շրջանակներից եւ վերածվում քաղաքական բարեմտաս իրադարձության. բելառուսական թերթերից մեկի վկայությամբ, սա բելառուսա-հայկական հարաբերությունների վերջին տարիներս նկատվող դինամիկ մերձեցման յուրօրինակ արտահայտությունն է:

Համարը սքանչելի է կազմված, եւ գրական ստեղծագործությունների բարձրաճաշակ ընտրությունը ընթերցողներին հնարավորություն է տալիս, կաթողիկոսի խոսքերով ասած, «հաղորդ դառնալ հայ ժողովրդի քրիստոնեական արարող մտքի արժեքներին»: Իրոք, մոսկվաբնակ լրագրողիս համար էլ հուզիչ է նորեն հանդիպելու այնքան հարազատ անունների: Հնամյա ժողովրդական բանահյուսություն, միջնադարյան պոեզիա, արեւմտահայ պոեզիա, XIX-XX դարերի գրականություն, ոչ ոք չի մոռացվել:

Մերձեցման ամեն մի կոնկրետ քայլ ողջունելի է, ինչն էլ արտահայտված է Հայոց հայրապետի օրհնության խոսքում, որն, ի դեպ, հրապարակված է նաեւ հայերեն. «Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում «Համաշխարհային գրականություն» ամսագրի խմբագրակազմի բոլոր անդամներին, Բելառուսում Հայաստանի դեսպանության ողջ աշխատակազմին՝ գլխավորությամբ պատվարժան դեսպան Սուրեն Հարությունյանի եւ գեղեցիկ այս ձեռնարկումին աջակցած ազնիվ անձանց»:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՅՈՒՅԱՍՐԱՀԱՇՏԵՐՈՒՄ

Սրբապատկերի ոճի վերականգնումը

Կարեն Աճեմյանը նոր անուն է գեղանկարչության ասպարեզում: Նոր է նաեւ այն ոճը, որ բերում է արվեստի աշխարհ: Գեղանկարը ստեղծվում է տարբեր չափերի եւ քանակի մանրացված քարերով, որոնցով այքան հարուստ է հայկական բնաշխարհը: Նկարիչն օգտագործում է քարերը եւ իրենց բնական տեսքով, եւ նոր գունավորումներով:

Ավարտելով մանկավարժական ինստիտուտի ինդուստրիալ ֆակուլտետը, 1987 թ. առաջին անգամ հայկական մանրանկարչության թեմաներով ստեղծում է գործեր, որով եւ հիմք է դնում իր ինքնատիպ ու անչափ մեծ ջանք ու եռանդ պահանջող գործին, քանի որ այն աշխատատար է եւ մանրակրկիտ: Կարեն Աճեմյանը նորօրյա մի մանրանկարիչ է՝ իր մեջ ներառելով քրիստոնեական հավատի ոգին ու ներշնչող ուժը, մանրանկարներին հաղորդելով առավել արտահայտչականություն, քանի որ չափերով մեծացված են: Դիտողի վրա մեծ տպավորություն են թողնում Աստվածամայրը, Քրիստոսի տարբեր կերպավորումները, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես ավետարանիչները, Գրիգոր Լուսավորիչը, Գրիգոր Նարեկացին:

Ժողովրդական արվեստի թանգարանում բացված ցուցահանդեսը վկայությունն է այն բանի, որ արվեստի աշխարհ է մուտք գործում տարիքով երիտասարդ, սակայն ստեղծագործ եւ հետագա ստեղծագործական լիցքերով տոգորված նկարիչ, որն իր ասելիքով հավատի կայծեր է սփռում արվեստասերների հոգիներում:

Առաջին անհատականը լայն ընդունելություն գտավ, եւ ցուցահանդեսի բացման ժամանակ ասված խոսքերը ոչ միայն դրվատանքի եւ ոգեւորելու համար էին, այլեւ ընդգծելու այն բարձր ճաշակը, գույնի, գծի, կոլորիտի առկայությունը, որ այնքան բնականորեն հատնում է դիտողին:

Արվեստագետներ Սարո Սարուխանյանը, Հենրիկ Իգիթյանը, Արեւշատ Ավագյանը, ողջունելով Կարեն Աճեմյան յուրօրինակ գեղանկարչին, կամեցան հետագայում վկա լինել նորանոր ստեղծագործական հայտնությունների:

Լ. ՄՈՒՇՈՒՇԱՐՅԱՆ

1700

Տոնակատարություններ Կիպրոսում

Նիկոսիայից մեր հատուկ թղթակից Ջորջ Տեր-Բարթողը հաղորդում է, որ կիպրոսահայերն այս շաբաթ պատշգամբային կարգով նշում են Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակը:

Տոնախմբությունները սկսվել են երեքշաբթի երեկոյան կրոնական թեմաներով նկարների ցուցահանդեսի բացումով Նիկոսիայի «Արմենիա» փողոցում գտնվող Ութուջյան դահլիճում, որը մաս է կազմում հայոց առաջնորդարանի եւ Նարեկ դպրոցի համալիրի: Ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են նաեւ հնագույն ավետարաններ եւ եկեղեցական իրեր, գործելու է մեկ շաբաթ:

Նույն օրը Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն «Գլոբալիզացիա: Ակնկալիքներ եւ վտանգներ: Քրիստոնեական տեսակետ» թեմայի շուրջ անգլերեն դասախոսություն է կարդացել Ինտերֆոլեջ դահլիճում:

Չորեքշաբթի օրը դարձյալ Ութուջյան դահլիճում բացվել է գրքերի ցուցահանդես, որը բաց է մնալու մեկ շաբաթ:

Երեկ՝ հինգշաբթի, նախատեսվում էր երեւանյան «Տաղարան» երգչախմբի հոգեւոր երաժշտության համերգը Նիկոսիայի «Ֆամագուստա գեյթ» մշակութային կենտրոնում:

Շաբաթ օրը Արամ Ա կաթողիկոսը մամուլի ասուլիս է տալու, իսկ կիրակի օրը, հովվապետական պատարագից հետո, հանդիսավորապես բացվելու է մի նոր խաչքար, որը ձեռքի գործն է լիբանանահայ քանդակագործ Պողոս Թասլաքյանի:

Հ. Ծ.

ՁԱՊՐԱՆԿԱՐՅԻ ԱՇՔԵՐՈՎ



ԱՇԽԱՐՀԻ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մրցանակային եռյակն ուրվագծվել է

Շախմատի աշխարհի թիմային առաջնության հերթական 7-րդ տուրի հանդիպումներից հետո կրկին փոխվեց առաջատարը: Ռուսաստանի հավաքականը 3-1 հաշվով հաղթելով Կուբայի հավաքականի շախմատիստներին, շրջանցեց մեր ընտրանուն: Ռուսներին նման հնարավորություն ընձեռեցին հայ շախմատիստները, որոնք ուզբեկների հետ մրցախաղում այնքան էլ վստահ հանդես չեկան: Մրցամարտի սկիզբը ոչ մի լավ բան չէր խոստանում հայ շախմատիստներին, որոնք մրցակցին զիջում էին 0,5-1,5 հաշվով: Առաջին խաղատախտակի վրա Հակոբյանը ոչ-ոքի ավարտեց հանդիպումը Ուզբեկստանի հավաքականի առաջատար Կասիմջանովի հետ: Իսկ ահա Լոյույանը պարտվեց Ջումաեւին: Մրցամարտում հավասարակշռությունը հաջողվեց վերականգնել Վահանյանին, որը գեղեցիկ ոճով հաղթեց Յուլդաշեւին: Ամեն ինչ կախված էր Անաստասյանի եւ Եգինի մրցախաղի արդյունքից: Բավական, երբ երկարաձգ ու ծանր պայքարից հետո երկու շախմատիստներին հատկացված ժամանակն արդեն սպառվելու վրա էր, մրցակիցները համաձայնեցին ոչ-ոքի: Այսպիսով, Հայաստանի հավաքականը ուզբեկների հետ խաղում բավարարվեց ոչ-ոքի արդյունքով: Հայաստանի հավաքականում հանդես եկած շախմատիստների ցուցանիշներն այսպիսին են. Հակոբյան՝ 4,5 (6), Լոյույան՝ 4 (6), Վահանյան՝ 3,5 (4), Անաստասյան՝ 2,5 (4), Մինասյան՝ 1,5 (2), Ասրյան՝ 1 (2):

Որոշ չափով անսպասելի էր գրանցված ոչ-ոքի արդյունքը Ուկրաինայի եւ Մակեդոնիայի հավաքականների մրցավեճում: Ինչպես եւ սպասվում էր հունգարացիները մեծ առավելությամբ հաղթեցին իրանցիներին:

Մրցաշարի ավարտից երկու տուր առաջ մրցանակային տեղերի համար պայքարը խիստ սրվել էր: Կարելի է վստահորեն ասել, որ առաջնության պարգեւները կվիճարկեն Հայաստանի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի շախմատիստները: Ճիշտ է, տեսականորեն այդ պայքարին կարող են խառնվել նաեւ գերմանացիները: Ութերորդ տուրում հայ շախմատիստները կմրցեն ուկրաինացիների հետ, իսկ ռուսների մրցակիցը կլինի Ուզբեկստանի հավաքականը: Ավարտական տուրում Հայաստանի հավաքականը կհանդիպի հունգարացիների հետ, իսկ ռուսներն ու ուկրաինացիները խաղասեղանների մոտ կնստեն միմյանց դեմ:

Ահա 7-րդ տուրի հանդիպումների համառոտ վիճակագրությունը.

Կուբա-Ռուսաստան՝ 1-3
Դոմինգես-Սվիդլեր՝ 0,5-0,5
Վերա-Դրեեւ՝ 0-1
Արենչիբիա-Գրիշչուկ՝ 0,5-0,5
Սբրոմ-Սակաեւ՝ 0-1

Ուկրաինա-Մակեդոնիա՝ 2-2
Իվանչուկ-Միտկով՝ 0,5-0,5
Պոնոմարյով-Նեդեւ՝ 0,5-0,5
Էյնգորն-Յասիմովիչ՝ 0,5-0,5
Ռոմանիշին-Բոգդանովսկի՝ 0,5-0,5

Հունգարիա-Իրան՝ 3,5-0,5
Լեկո-Մաղալի՝ 1-0
Գիմեշի-Զարդաս՝ 1-0
Ռուֆ-Ռոզարի՝ 0,5-0,5
Վարգա-Նադաֆ՝ 1-0

Մրցաշարային աղյուսակ

1.	Ռուսաստան	17,5 (24)
2.	Հայաստան	17 (24)
3.	Ուկրաինա	16,5 (24)
4.	Գերմանիա	14 (24)
5.	Կուբա	12,5 (24)
6.	Ուզբեկստան	12 (24)
7.	Հունգարիա	11,5 (24)
8.	Մակեդոնիա	6,5 (24)
9.	Իրան	4,5 (28)

ՖՈՒՏԲՈԼ

Բարեզի ճակատագրական սխալները հանգեցրին «Մանչեսթր Յունայթեդի» պարտությանը

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 2-րդ շրջանի անդրադարձ հանդիպումներն անցկացրին նաեւ «E», «F», «G» եւ «H» խմբերում ընդգրկված թիմերը: Մադրիդի «Ռեալից» հետո չեխական «Սպարտան» էլ ժամկետից շուտ նվաճեց հաջորդ փուլում հանդես գալու իրավունքը: Գործնականում ուղեգիրը ապահովել է նաեւ Մյունխենի «Բավարիան»: Մյուս ուղեգրերի համար պայքարը դեռ առջեւում է:

2-րդ շրջանի մեկնարկային տուրի հանդիպումներից թերեւս ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում էր «Մանչեսթր յունայթեդի» եւ «Դեպորտիվոյի» մրցավեճը: Խաղասկիզբը խոստումնալից էր անգլիացիների համար, որոնք արդեն 7-րդ րոպեին բացեցին հաշիվը: Սակայն հյուրերն այդ օրը վարժականորեն էին տրամադրված: 37-րդ րոպեին օգտվելով պաշտպան Բրաունի եւ դարպասապահ Ֆաբյեն Բարեզի ընդհարումից, Գոնսալեսը հավասարեցրեց հաշիվը, իսկ 2 րոպե անց Տրիստանն առաջ մղեց իսպանացիներին: Ճիշտ է, հյուրերի ուրախությունը շատ կարճ տեւեց: Եվս 2 րոպե անց կրկին այդի ընկավ Նիստելբոյը: Ընդմիջումից հետո դաշտում պայքարը նոր ուժով բորբոքվեց: Դժվար է ասել, թե ինչպես կավարտվեր հանդիպումը, եթե 60-րդ րոպեին հերթական սխալը չգործեր Բարեզը: Տրիստանն անմիջապես օգտվեց այդ նվիրատվությունից եւ պատժեց «Մանչեսթր յունայթեդին», որն այդպես էլ չկարողացավ փրկել խաղը:

Անճանաչելի է դարձել Մոսկվայի «Սպարտակը», որը հյուրընկալվելիս 1-5 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց «Բավարիայից»: Իսկ ահա, «Սպարտան» հյուրընկալվելիս էլ վստահ խաղաց՝ 2-0 հաշվով հաղթելով «Ֆեենորդին»: Այդ խաղի 67-րդ րոպեին դաշտից հեռացվեց հոլանդացի Հոյդոնկը, իսկ 7 րոպե անց «Ֆեենորդը» խաղադաշտում մնաց 9 հոգով. Հոյդոնկի օրինակին հետեւեց Հաանը: Ճիշտ է, մինչ խաղացողների դաշտից հեռացվելը «Սպարտան» արդեն բացել էր հաշիվը, իսկ թվային գերակշռություն ստանալուց հետո կարողացավ նաեւ 2-րդ գոլը խփել:

4-րդ տուրում առաջին պարտությունը կրեց «Բայերը», իսկ ահա «Օլիմպիակոսին» վերջապես հաջողվեց ճաշակել հաղթանակի քաղցրությունը: «Ֆեներբախչեն» 4-րդ խաղում էլ պարտվեց:

Խաղերի արձանագրություններից

«E» խումբ
«Յուվենթուս»-«Ռուսենբորգ»՝ 1-0 (1-0)
Տրեզեգե (25)
«Պորտո»-«Սելթիկ»՝ 3-0 (2-0)
Կրուժ (1, 61), Միլվա (45)

«F» խումբ
«Լիոն»-«Ֆեներբախչե»՝ 3-1 (1-1)
0-1՝ Դերելիոզլի (35), 1-1՝ Գովու (45), 2-1՝ Կարյեր (53), 3-1՝ Դելմոս (68)
«Բարսելոն»-«Բայեր»՝ 2-1 (2-1)
1-0՝ Կլույվերս (12), 1-1՝ Ռամելով (32), 2-1՝ Էնրիկե (38)

«G» խումբ
«Մանչեսթր յունայթեդ»-«Դեպորտիվո»՝ 2-3 (2-2)
1-0՝ վան Նիստելրոյ (7), 1-1՝ Գոնսալես (37), 1-2՝ Տրիստան (39), 2-2՝ վան Նիստելրոյ (41), 2-3՝ Տրիստան (60)
«Օլիմպիակոս»-«Լիլ»՝ 2-1 (0-1)
0-1՝ Բասիր (38), 1-1՝ Ալեքսանդրիս (53), 2-1՝ Նինիադիս (64)

«H» խումբ
«Բավարիա»-«Սպարտակ»՝ 5-1 (3-0)
1-0, 2-0՝ Պիսարո (7, 22), 3-0, 4-0՝ Էլբեր (33, 52), 4-1՝ Բեսլասնիխ (58), 5-1՝ Ցիկլեր (90):
«Ֆեենորդ»-«Սպարտա»՝ 0-2 (0-1)
Յարոսեկ (43), Նովոտնի (78)

«E» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Յուվենթուս	4	2	2	0	5-3	8
2. Պորտո	4	2	1	1	5-2	7
3. Սելթիկ	4	2	0	2	4-6	6
4. Ռուսենբորգ	4	0	1	3	2-5	1

«F» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բարսելոն	4	3	0	1	8-3	9
2. Բայեր	4	3	0	1	6-4	9
3. Լիոն	4	2	0	2	4-4	6
4. Ֆեներբախ.	4	0	0	4	2-9	0

«G» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դեպորտիվո	4	2	2	0	8-6	8
2. Մանչեսթր	4	2	0	2	6-5	6
3. Լիլ	4	1	1	2	5-5	4
4. Օլիմպիակ.	4	1	1	2	5-8	4

«H» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սպարտա	4	3	1	0	8-0	10
2. Բավարիա	4	2	2	0	10-4	8
3. Ֆեենորդ	4	0	2	2	4-10	2
2. Սպարտակ	4	0	1	3	4-12	1

ՇԱԽՄԱՏ

Առջեւում Վիկտոր Կորչնոյն է

Հոլանդական Հոոգեվեն քաղաքում 4 շախմատիստների մասնակցությամբ անց է կացվում շախմատի մրցաշար երկու շրջանով: Մասնակցում են միջազգային գրոսմայստերներ Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա), հոլանդացի Լյուկ վան Վելին, հունգարուհի Հուդիթ Պոլգարը եւ կուբացի Լասարո Բրուզոնը:

Մրցաշարում արդեն խաղացվել է 3 տուր: Առջեւում Վիկտոր Կորչնոյն է, որը հաղթելով Բրուզոնին ու Պոլգարին եւ ոչ-ոքի ավարտելով հանդիպումը վան Վելիի հետ, 2,5 միավորով գլխավորում է աղյուսակը: Հոլանդացի շախմատիստը վաստակել է 1,5 միավոր: Նրանից կեսական միավորով հետ են մնում Պոլգարն ու Բրուզոնը:

Նախորդ սկանդինավյան խաչբառի պատասխանները

Ուղղահայաց
1. Բիլինա: 2. Վալենտին: 3. Նոպաս: 4. Իսկ: 9. Անի: 10. Ինա: 13. Ուրան: 14. Պո: 16. Գրիկ: 19. Նորվ: 21. «Նինա»: 24. Ոելե: 25. Ադան 27. Ագրա: 28. Պիկասո: 30. Երեւելի: 33. Ժաննա: 34. Արտակ: 36. Քնար:

Հորիզոնական
5. ՖԻՖԱ: 6. Էպոս: 8. Լալա: 11. Են: 12. «Տու»: 15. Նիգ: 17. Ալս: 18. «Ան»: 20. Ինի: 22. Նոր: 23. «Գեոնիկա»: 26. Դոնա: 29. Պլեադա: 31. Ջիեր: 32. Նժար: 35. Եւ: 37. Ա-ռա: 38. Նարե: 39. Նանս: 40. Լիա: 41. Իա: 42. Նախ: 43. Ախ: 44. Մորի: 45. Ակ:

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԽԱՉԲԱՌ



DAI
Development Alternatives, Inc.

USAID

Ջրային ռեսուրսների կառավարում Հարավային Կովկասում
ՆԱԽՆԱԿԱՆ ՈՐՍԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ
Համադարփակ գեսավազանային կառավարում Խրամի/Դեբեդ գեսավազան

Ծրագրի նկարագիրը

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը պայմանագիր է կնքել Development Alternatives, Inc. (DAI) կազմակերպության հետ «Ջրային ռեսուրսների կառավարում Հարավային Կովկասում» ծրագիրը մշակելու եւ իրականացնելու համար: Հինգ հիմնական միջոցառումներ են մշակվել ծրագրի իրականացման համար, որոնցից մեկը երկկողմանի հիմունքով համադարփակ գեսավազանային պլանավորումն է պիլոտային տարածքներում:

Համադարփակ գեսավազանային պլանավորման գործընթացը ցուցադրելու համար ընտրվել են երկու պիլոտային տարածքներ: Դրանցից մեկը Քուռ գետի վտակի գեսավազանն է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ եւ կոչվում է «Խրամի/Դեբեդ գեսավազան», մյուսը «Ալազանի գեսավազանն» է Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

Սույն նախնական որակավորման պահանջագիրը վերաբերվում է **Խրամի/Դեբեդ գեսավազանի** պիլոտային տարածքին: Ալազանի գեսավազանի միջոցառումն ընդգրկված է առանձին նախնական որակավորման գործընթացում, եւ նախնական որակավորման փաստաթղթերը մեկ կամ երկու պիլոտային տարածքների համար ներկայացնելիս կարող է կազմվել դաշինք:

Սույն միջոցառման հիմնական նպատակն է համադարփակ գեսավազանային պլանավորման **գործընթացի ցուցադրումը** տեղական մակարդակով, եւ սույն միջոցառման հիմնական ուղղվածությունը կլինի հզորությունների/ունակությունների ստեղծում ռեգիոնում: Այս գործընթացը աղագայում կարող է կիրառվել ընդլայնված ծրագրի կոնտեքստում (օրինակ՝ Քուռ գետի ավազանի ավելի մեծ գեսավազաններ, եւ, վերջապես, Քուռ գետի ամբողջ ավազանը) այլ դոնորների հովանավորմամբ: Գործընթացը կարող է նաեւ օգտագործվել՝ ընդլայնելու ստորեւ նշվող գործողությունները ընտրված պիլոտային տարածքներում՝ աղագայում լրացուցիչ պլանավորման միջոցով:

Պիլոտային տարածքներում սույն միջոցառման շրջանակներում իրականացվելիք հիմնական աշխատանքները ներառում են.

- պիլոտային տարածքում շահագրգիռ կողմերի բացահայտում,
- ջրօգտագործման վերլուծություն, ջրի քանակի եւ որակի վերլուծություն եւ GIS տեղեկատվություն,
- ջրային ռեսուրսների պրոբլեմների, կարիքների եւ պոտենցիալ լուծումների գնահատում,
- ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ վերապատրաստման եւ տեղեկատվական սեմինարների կազմակերպում,
- ջրային ռեսուրսների մոնիտորինգի կայանների պոտենցիալ տեղակայումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- պիլոտային տարածքում հասարակական իրազեկության բարձրացման քարոզարշավի իրականացում,
- նախնական գեսավազանային համադարփակ պլանի եւ ամփոփիչ զեկույցի պատրաստում,
- պիլոտային տարածքում իրականացվելիք ներկայացուցչական ծրագրերի առաջադրում, եւ
- երկարաժամկետ պլանի նախապատրաստում, ներառյալ արտաքին ֆինանսական օժանդակությամբ իրականացվելիք ծրագրերի առաջարկում:

Նախնական որակավորման գործընթացը

Կազմակերպություններին խնդրվում է ներկայացնել նախնական որակավորման փաստաթղթեր, եւ քաջալերվում է Հայաստանում եւ Վրաստանում պոտենցիալ դաշինքների ստեղծում աջակցելու Խրամի/Դեբեդ գեսավազանի միջոցառման իրականացմանը: Նախնական որակավորման փաստաթղթերը ներառում են.

- կազմակերպության նկարագիրը եւ, մասնավորապես, ջրային ռեսուրսների կառավարման եւ/կամ ռեսուրսների համադարփակ պլանավորման փորձը,
- ծանոթությունը պիլոտային տարածքներին,
- կազմակերպության փորձը համանման ծրագրերում,
- առաջարկվող փորձագետների Curriculum Vitae,
- եւ այլ օժանդակող փաստաթղթեր:

Երբ նախնական որակավորման գործընթացն ավարտվի, այդ փուլն հաջողությամբ անցած դաշինքների միջեւ մրցույթ կհայտարարվի ներկայացնելու Խրամի/Դեբեդ գեսավազանի ծրագրի աշխատանքների շրջանակում տեխնիկական եւ ֆինանսական առաջարկություններ:

Նախնական որակավորման չափանիշները

Ստորեւ նշվող չափանիշները կօգտագործվեն նախնական որակավորման փաստաթղթերը գնահատելիս եւ Խրամի/Դեբեդ գեսավազանում համադարփակ գեսավազանային պլանավորման ծրագիրն իրականացնող դաշինք ընտրելիս.

- Ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների (ՈԿԿ) ընդգրկում
  - ՈԿԿ-ների ներկայությունը դաշինքում,
- Համանման ծրագրերի փորձ ունեցող դաշինք
  - դաշինք ստեղծելու ջանքերը,
  - դաշինքի փորձը համանման պայմանագրերում,
- Առաջարկվող աշխատակազմի փորձը հետեւյալում.
  - կառավարման ունակություն եւ փորձ,
  - ջրային ռեսուրսների կառավարում եւ/կամ ջրային ռեսուրսների վերաբերյալ ծրագրեր,
  - հիդրոլոգիական/օդերեւութաբանական տվյալների կառավարում,
  - հասարակական իրազեկության քարոզարշավ,
  - վերապատրաստման եւ սեմինարների իրականացում,
  - պիլոտային տարածքում աշխատանքային փորձ:

DAI կազմակերպությունը եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը իրավունք են վերապահում վերանայել այս չափանիշները նախնական որակավորման դիմումների գնահատման ընթացքում եւ ընդունել կամ մերժել որեւէ կամ բոլոր նախնական որակավորման փաստաթղթերը:

Խորհրդակցություն

Խնդրվում է հարցերի եւ խորհրդակցության վերաբերյալ **գրավոր** դիմել հետեւյալ հասցեներից մեկով.

Խրամի/Դեբեդ գեսավազանի նախնական որակավորում
Պր-ն Ռամազ Գոխեշվիլի
Development Alternatives, Inc. կամ
Վրաստան, 380079, Պալիաշվիլի փող. 14
Հեռ. (995-32) 231077 կամ 232764
էլ-փոստ. ramaz_gokhelashvili@dai.com

Խրամի/Դեբեդ գեսավազանի նախնական որակավորում
Պր-ն Վահագն Տոնոյան
Development Alternatives, Inc.
ՀՀ, Երեւան 375010, Պուշկինի փող. 38, բն. 14
Հեռ. (374-1) 539-295 կամ 539-296
էլ-փոստ. vtonoyan@mail.miis.alumlink.com

Ովքեր կարող են դիմել

Նախնական որակավորման գործընթացին կարող են մասնակցել Վրաստանում եւ/կամ Հայաստանում իրավաբանորեն գրանցված կազմակերպությունները: Դաշինքի մեջ պետք է ընդգրկվի առնվազն մեկ կազմակերպություն յուրաքանչյուր երկրից: Կազմակերպությունները կարող են լինել ՈԿԿ-ներ, մասնավոր խորհրդատվական ընկերություններ, ոչ կառավարական գիտահետազոտական ինստիտուտներ կամ համանման կազմակերպություններ: Նպատակն է համադարփակ գեսավազանային պլանավորման գործընթացի ցուցադրումը: Սույն գործողության հիմնական ուղղվածությունն է տեղական մակարդակով ունակությունների/հզորությունների ստեղծումը:

Դիմումների վերջին ժամկետը

Խնդրվում է ներկայացնել նախնական որակավորման փաստաթղթերի 2 (երկու) օրինակ եւ 1 (մեկ) էլեկտրոնային տարբերակ, ոչ ուշ, քան 2001 թ. հոկտեմբերի 31-ը վերը նշված հասցեներից մեկով:

Աշխատանքի հրավեր

Պահանջվում է փականագործ-հավաքող (слесарь-сборщик) IV-VI կարգի: Դիմել հետեւյալ հասցեով՝ Նորքի V զանգված, Միկոյան 17, հեռ. 64-29-40, 64-24-67, մինչեւ ժամը 18:00-ը:

Շնորհակալություն

Շնորհակալություն եմ հայտնում Նորքի սուր վարակիչ հիվանդանոցի բաժնի վարիչ Իրինա Մխիթարյանին եւ բժշկուհի Ռուզաննա Եղիազարյանին՝ կյանքս փրկելու համար:

ՍԻՐԱՆՈՒՇ ԲԱԼՈՅԱՆԻՑ

ARMENTEL

Հայտարարություն

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ՝ հիմնական միջոցների գնահատման եւ ռիսկի ուսումնասիրության աշխատանքների կատարման համար:

Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին, պետք է ունենան Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման աշխատանքներ կատարելու համար պահանջվող լիցենզիան:

Մրցույթի անցկացման պայմանները, աշխատանքների ծավալները շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով՝ «Արմենտել» ՀՁ, Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ. 28-70-66

Առաջարկների ներկայացման ժամկետը նոյեմբերի 12-ի ժամը 12-ն է:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

MELMAX Ltd

«ՄԵԼՄԱՔՍ» ընկերության երեւանյան գրասենյակն առաջարկում է հետեւյալ ծառայությունները.

1. Գտնել եւ տեղեկություններ հայտնել Ձեր հարազատների կորած գերեզմանի մասին:
2. Անհրաժեշտության դեպքում նորոգել, բարեկարգել, կանաչապատել, խնամել Ձեր հարազատների գերեզմանները:
3. Հարազատների պատվերով ծաղիկներ եւ ծաղկեպսակներ դնել նրանց գերեզմաններին՝ ծննդյան, մահվան, տարեդարձերի կապակցությամբ կամ եկեղեցական ծիսական օրերին:
4. Տեղեկություններ հավաքել կորած հարազատների գտնվելու վայրի մասին եւ կապ հաստատել Ձեզ հետ:

Մեր հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն, Երեւան-37, փ. Բաբայան 36/19
Հեռ. (374 1) 256-822, (374 1) 549-231, (374 9) 410-091
Ֆաքս. (374 1) 288-496
էլ. փոստ: mhakobyan2001@yahoo.com

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

ԺՈՒՅԱԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

2001 թ. հոկտեմբերի 18-ի առեւտրային նստաշրջան

Թողարկող Issuer	Հատ. ABBR	Դասակ Listed	Պահանջարկ* Bid: Լավագույն գին Best price	Պահանջարկ* Bid: Միջ. կշռ. գին Avg. price	Պահանջարկ* Bid: Ընդհանուր Total qnt.	Առաջարկ* Ask: Լավագույն գին Best price	Առաջարկ* Ask: Միջ. կշռ. գին Avg. price	Առաջարկ* Ask: Ընդհանուր Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: Նվազ. գին Day low	Կատարված գործարքներ Transactions: առավ. գին Day high	Կատարված գործարքներ Transactions: Միջ. կշռ. գին Avg. price	Կատարված գործարքներ Transactions: փոփ.% Avg%	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՐԴՎԻՆ ԷԼԵԿՏՐԱԳՐ (ԱԼՄԱՍՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱՍԵՎԱՆ	ASEV	B											
ԱՍՏԵԿՀՈՍԿ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ Գ/Ն	AVAG	B											
ԱՎԱՀԱՄԱԼԻՐ	AVHM	B											
ԱՎՏՈԲԵՌՆԻՉ	AVTB	B											
ԱՎՏՈՄԱՏԻԿԱ Գ/Ն	AVTM	B											
ԲՀԵԱ-ՊԼԱՍՍ	BHSP	B											
ՉԱՐԵՆՑ ԳՈՐԾԻՔՍՇԻՆ Գ/Ն	CHGG	B											
ԿԱՊԻՏԱԼ ՍԵՆԵՏՍԵՆԹ	CPMT	B	600.0	600.0	2								
ԴԱՎԻՏԱՇԻ ԱՐՏ. ՋՐ. Մ/Կ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵՀ. Գ/Ն	DBJG	B											
ԴԱՎԻՏԱՇԻ ԱՌՈՂՋ. ՀՁ	DJAH	B											
ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐՈՇՇԳՐԻՏՍԱՐՔ	ECHS	B											
ԷՅՄԻԱԾԻՆ ՍԱՐՔՍՇԻՆ. Գ/Ն	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐՈՇԱՐԺՉՆԵՐԻ Գ/Ն	EELJ	B											
ԵՐՖՐԵԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՀԱԶԴՐԱԿ Գ/Ն	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱՎԱՆ Գ/Ն	EJWG	B											
ԵՐԿԱԹԲԵՏՈՆ 7	EKB7	B	1,250.0	1,250.0	2								
ԵՐ. ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ Գ/Ն	EKQG	B	400.0	400.0	100								
ԷԼԵԿՏՐԱՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՍՈՆՏԱԺ	ELMJ	B											
ԵՂՎԱՐԴԻ ՄԱՐԶԱԿՈՀԿՆԵՐԻ Ֆ/Ա	EMKFC0	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱԵՔՍՊՈ	EMQR	B											
ԵՅԱՍ	EMTA	B											
ԷՅՄԻԱԾԻՆ ՊԼԱՍՏԱՍՍ. Գ/Ն	EPLG	B											
ԵՐ. ԺԱՍՏՈՒՅՏԻ Գ/Ն	ERJG	B	1,350.0	1,350.0	3				1,350.0	1,350.0	1,350.0		31.1
ԵՐԿԱԹԲԵՏՈՆ	ERKB	B	1,000.0	1,000.0	50								
ԵՐ. ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ Գ/Ն	ESHG	B	500.0	500.0	100								
ՍԱԼԱԽԻՏ ՇԵՆ. Գ/Ն (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	10								
ՎԱՆ ԱՖ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱՎԱՆ Գ/Ն - 1	EVGI	B	50.0	50.0	10								
ՍԱՆՎ	GANV	B											
ԳԵՂԱՄԱ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍ ՊԱՇՏՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՐՈԲԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԴԻՉ	HASH	B	100.0	100.0	28,300								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՇԻԽԱՆՈՏ	HATS	B	1,555.0	1,208.1	48								
Հ ԷՄ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔԱՄՄԵՔԵԼԱ	HQMQ	B	1,000.0	1,000.0	3								
ՀԱՅՔ-ՇԻՆԱՐԱՐԱԾ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՄՈՒՐՋՇԻՆ	KMSH	B											
ԿՆՆԿԱ	KNKA	B											
ՈՒԼԷ Գ/Ն (ԿԱՊՈՒՏԻՆ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ Գ/Ն	MQER	B	2,220.0	2,220.0	1								
ՄԱՐՏՈՒՆԻՇԻՆ	MRSH	B											
ՄԵՐՉԱՆՈՎՅԱՆ	MSKV	B											
ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	MSTB	B	400.0	400.0	20								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ա	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌԵԶԻՍՏՈՐ	RZTR	B	825.0	825.0	2								
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻԱՄԵՐԵՆԱՆՈՐՈԳԱՒՍ	SHMN	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ. Գ/Ն	SKSG	B											
ՏՈՒՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐՇԻՆ	UKSH	B											
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ա	VAKF	B											
ՎԱՆՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ Գ/Ն	VTMG	B											
ԵՐԵՎԱՆ ԿԱՌՈՒՑ	YKHQ	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐ. ՈՒԼԵԻ Գ/Ն	YRLE	B											

* - Չբավարարված պահանջարկի/առաջարկի հայտերի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:

© Armex

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկման համար Issue number	Մարմնից մնացած տարիներ /Days till redemption	Պահանջարկ Bid: Տարեկան եկամտաբերություն (%) (Լավագույն) /Best Yield (%)	Պահանջարկ Bid: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ առաջարկների /By quote	Պահանջարկ Bid: Ըստ անվանական արժեքի Face value	Առաջարկ Ask: Տարեկան եկամտաբերություն (%) (Լավագույն) Best Yield (%)	Առաջարկ Ask: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ առաջարկների /By quote	Առաջարկ Ask: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ անվանական արժեքի Face value	Կատարված գործարքներ Transactions: Տարեկան եկամտաբերություն (%) Yeild (%): Նվազագույն Day low	Կատարված գործարքներ Transactions: Տարեկան եկամտաբերություն (%) Yeild (%): առավելագույն /Day high	Կատարված գործարքներ Transactions: Տարեկան եկամտաբերություն (%) Yeild (%): միջին կշռված Weighted Averag	Կատարված գործարքներ Transactions: Միջին կշռված եկամտ. փոփոխ. (%) of WAY (%)	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ գործարքների Of trade	Կատարված գործարքներ Transactions: Ծավալ (հազ. դրամ) Volume (tshd. drams): Ըստ անվանական արժեքի Face value
AMGT3909D02	172				17.1	2,265.0	2,450.0	17.0	17.0	17.0		1,866,974.8	2,050,000.0
AMGT3818F02	242				16.9	3,354.6	3,735.0						
AMGT5205I02	321				17.1	3,038.0	3,500.0						

Բացատրություն՝ AM - Հայաստան, G - Կառավարություն, T - կարճաժամկետ, հարող 2 թվերը ցույց են տալիս թողարկման պահից տրամաբանության ժամկետը տարիներով, հաջող նիշերը ցույց են տալիս մարման ժամկետը (օր. 090 - 09 ամիսներ), վերջին երկու թվերը նշում են մարման տարին (02 - 2002 թ.): Գործարքի նվազագույն ծավալը 1000 դրամ (ըստ անվանական արժեքի)

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 17.10.2001 Գինը 100 դրամ